11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 178(5030)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# SOS. մեր նաւը կ՛ընկղմի՞

***Այս տառուչ SOS-ը ստացել ենք հրդեհվող ու կործանվող Հալեպից, որտեղ զոհվում են նաեւ մեր ազգակիցները: Հեղինակը՝ Մանվել Քեշիշյան, հայտնի անձնավորություն է Սիրիայում, մասնագիտությամբ ու գործունեությամբ ռեժիսոր-բեմադրիչ, որ իր բարձրագույն կրթությունն ստացել է Երեւանում: Նրա անհազանգային բոլոր խոսքերից ամենակարեւորը՝ կյանքի ապահովությանը վերաբերող խնդիրն է: Կարո՞ղ ենք մենք, ողջ հայությունը, որեւէ բան անել այդ ուղղությամբ. դժվար թե: Մենք բոլորս վիճակում ենք այն երեխայի ծնողների, որոնք չգիտեն լողալ, մինչ իրենց զավակը իրենց աչքի առաջ խեղդվում է ծովում... Ի՞նչ անել:***

Ազգովին տէր ըլլանք սուրիահայութեան:

Ազգովին տէր ըլլանք Հալէպի գաղութին:

Տէր ըլլանք այստեղ ապրող իւրաքանչիւր հայու:

Տասնեակ հայ ընտանիքներու տուներ եւ խանութներ քանդուեցան, նաեւ հրոյ ճարակ դարձան:

Տասնեակ հայեր վիրաւորուեցան եւ սպաննուեցան: Իւրաքանչիւր սպաննուածի հետ տասնեակ հայեր գաղթեցին, հարիւրաւոր հայեր որոշեցին գաղթել: Եթէ մինչեւ հիմա կարելիութիւն ունեցողները կ՛երթային, այժմ արդէն հնարաւորութիւն չունեցողներն ալ ճամբայ մը կը գտնեն երթալու:

Կը դիտեմ Հալէպի հայակերտ եկեղեցիները, դպրոցները, ակումբները, տուները եւ կը տխրիմ, հոգիս կու լայ:

Այս ի՞նչ ճակատագիր է, Աստուած իմ... Չեմ կրնար հաւատալ, որ այս գաղութն ալ կրնայ շուտով պատմութեան գիրկն անցնիլ, չեմ կրնար հաւատալ: Աւելի ճիշդ՝ չե՛մ ուզեր հաւատալ:

Իրականութիւնը որքան ալ դառն ըլլայ՝ կը մնայ անխուսափելի իրականութիւն:

Առնուազն հինգ հազար հայեր հեռացած են Հալէպէն, մնացածներուն մեծ մասը հոս է, որովհետեւ հնարաւորութիւն չունի երթալու: Հաւանաբար շուտով կարգը կու գայ քանի մը կրամ ոսկի ունեցողներուն, որոնք կը խօսին ապաստան տուող երկիրներու մասին՝ Կանադա, Աւստրալիա, Հոլանդա... կարեւորը դրացի երկիր մը հասնիլն է, ուր գոյութիւն ունին նշեալ երկիրներուն դեսպանատուներ... Հալէպի ապահովական վիճակը օրըստօրէ կը վատթարանայ, եւ եթէ այսպէս շարունակուի՝ բոլորը միշտ մտածեն իրենց պահած քաղաքը լքելու մասին եւ միշտ երթան... ո՞ւր.. ուր որ կարենան, ինչպէ՞ս, ինչպէս որ պատահի, թերեւս նաեւ հետիոտն:

Տես էջ 2

# ԼՂՀ ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել՝ ՄԱԿ-ում վերահաստատելով, որ Ստեփանակերտն ընթանում է ժողովրդավարության ուղիով

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում եւ Անվտանգության խորհրդում առաջին անգամ տարածվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, որով ԼՂՀ ԱԳՆ-ն պատասխանում է ՄԱԿ-ում Ադրբեջանի ներկայացուցչի նամակներին, որոնք վերաբերում էին 2012-ի հուլիսի 19-ին կայացած ԼՂՀ նախագահական ընտրություններին:

ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության փաստաթղթում նշվում է, որ «ազատ եւ թափանցիկ կամարտահայտման հիման վրա պետական կառույցների ձեւավորումը դարձել է հանրապետության քաղաքական մշակույթի անքակտելի մասը»:

Պատասխանում ընդգծվում է նաեւ, որ 2012-ի հուլիսի 19-ին ԼՂՀ-ում կայացած նախագահական ընտրությունները եւս մեկ քայլ են երկրում ժողովրդավարական ավանդույթների եւ համընդհանուր արժեքների ամրապնդման ճանապարհին, ինչը հաստատվում է միջազգային դիտորդների, այդ թվում՝ Եվրոպական խորհրդարանի պատգամավորների, լրագրողների եւ հասարակական գործիչների բարձր գնահատականներով:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լիահույս է, որ միջազգային հանրությունը պատշաճ կերպով կարձագանքի երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացներին, ինչը հերթական իրական ազդանշան կդառնա մոլորակի տարբեր տարածաշրջանների այն երկրների համար, որոնք ընտրել են ժողովրդավարության ուղին:

Ադրբեջանից հնչող պնդումները, թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդավարական զարգացումն արգելակում է խաղաղ գործընթացը, անտրամաբանական են եւ հետամուտ են միայն մեկ նպատակի՝ շեղել միջազգային հանրության ուշադրությունը այն իրական խոչընդոտներից, որոնք առկա են բանակցային գործընթացի շրջանակներում», մասնավորապես ասված է ԼՂՀ ԱԳՆ նամակում:

Համաձայն ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանի՝ ԵԱՀԿ Մինսկի գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություններից Ադրբեջանի հրաժարումն է խափանում տարածաշրջանային խաղաղությունը, անվտանգությունը եւ կայունությունը:

**Հ. Ա.**

# Դեպրեսիան դառնում է ամենատարածված խանգարումներից մեկը

**Երեկ հոգեկան առողջության համաշխարհային օրն էր: Առողջապահության նախարարությունից տեղեկանում ենք, որ ամբողջ աշխարհում հոգեկան խանգարումներ ունեցողների թիվը կազմում է շուրջ 450 միլիոն, իսկ դեպրեսիա ունեն 350 միլիոն մարդ:**

**Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուսումնասիրության համաձայն՝ 2020 թվականին հաշմանդամություն առաջացնող հիվանդությունների ցանկում դեպրեսիան լինելու է երկրորդ տեղում: Նույն կազմակերպության 2008 թվականի տվյալներով՝ 2030-ին դեպրեսիան կլինի առողջական ամենատարածված խանգարումը: 17 երկրներում հոգեկան առողջության վերաբերյալ կատարված հարցումները ցույց են տվել, որ 20 մարդուց մեկի կյանքում մի տարվա ընթացքում լինում է դեպրեսիվ իրավիճակ: Հետեւաբար պատահական չէ, որ Հոգեկան առողջության համաշխարհային համադաշնությունը այս տարվա համար կարգախոս է ընտրել «դեպրեսիա՝ գլոբալ ճգնաժամ» արտահայտությունը:**




**Դեպրեսիան հոգեկան խանգարում է, որն արտահայտվում է ընկճված տրամադրությամբ, հետաքրքրությունների կամ հաճույքի զգացողության կորստով, եռանդի նվազմամբ, ցածր ինքնագնահատականով, քնի խանգարումներով եւ այլ ախտանշաններով: Ոչ միայն դեպրեսիան, այլեւ ընդհանրապես հոգեկան խանգարումները կարող են արտահայտվել անկախ մարդու տարիքից, սեռից, սոցիալ-տնտեսական պայմաններից: Հետեւաբար կարեւոր է, որ մարդիկ հնարավորինս լավ իրազեկ լինեն հոգեկան խնդիրների ու հիվանդությունների մասին: Հենց այդ նպատակով էլ Հոգեկան առողջության համաշխարհային համադաշնության նախաձեռնությամբ 1992 թվականից հոկտեմբերի 10 նշվում է որպես հոգեկան առողջության համաշխարհային օր, որը նաեւ նպատակ ունի հասարակության ուշադրությունը հրավիրելու հոգեկան առողջության խնդիրների վրա:**

**Ի. Պ.**

# ԱԱԾ-ը «Սիվիլիթասից» փաստաթղթեր է առգրավում, իսկ ԱՄՆ դեսպանը հանդիպել է Գագիկ Ծառուկյանի հետ

Երեկ «Սիվիլիթաս» հիմնադրամի տարածած հաղորդագրության մեջ նշված էր, որ Ազգային անվտանգության ծառայությունը որոշում է ընդունել «Սիվիլիթասից» փաստաթղթեր առգրավել: ԱԱԾ քննչական վարչության պետի տեղակալ Մ. Համբարձումյանի առգրավում կատարելու մասին որոշման մեջ, որի օրինակը տրամադրվել է Սիվիլիթաս հիմնադրամին, նշված է. «Առգրավել «Սիվիլիթաս» հիմնադրամում առկա՝ ԱՄՆ-ում գրանցված «Հանթսման Ինստրնեյշնլ» եւ «Պոլիմեր Մաստրալս Ինք» կորպորացիաների կողմից «Սիվիլիթաս» հիմնադրամին «Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս» ՍՊ ընկերության միջոցով՝ 577 897 ԱՄՆ դոլար եւ 11 494 000 դրամ, իսկ «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահի Վարդան Օսկանյանի միջոցով՝ 1 427 000 ԱՄՆ դոլար հիմնադրամին հատկացնելու, այդ գումարները հիմնադրամի կողմից տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու վերաբերյալ փաստաթղթերը, այդ թվում՝ հոգաբարձուների խորհրդի որոշումները, նշված խորհրդի նիստերի արձանագրությունները, գումարները կոնկրետ ծրագրերին ուղղելու, ֆիզիկական անձանց մոտ թողնելու կամ նրանց տրամադրելու վերաբերյալ հանձնագրերը կամ հայտարարությունները, ինչպես նաեւ բոլոր այն փաստաթղթերը, որոնք կարող են կապ ունենալ վերը նշված երկու գործարքների հետ (բացառությամբ վարչակառավարչական ծախսերը հիմնավորող հաշվապահական փաստաթղթերի)»:

Տես էջ 2

# Իտալիայի խորհրդարանում հուլիսին հակահայկական բանաձեւ է կասեցվել

## *Հարցազրույց Իտալիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Կարապետյանի հետ*

***Հայ-իտալական միջպետական հարաբերությունները այնքան էլ հեշտորեն չեն տրվում, քանի որ այս երկրում բավական ակտիվ աշխատում է ադրբեջանական լոբբին, Իտալիան Ադրբեջանից 8,5 մլրդ դոլարի նավթ եւ մի շարք այլ ապրանքներ է գնում: Սակայն վերջին երեք տարին ակտիվ աշխատանք է ծավալում նաեւ Իտալիայում Հայաստանի դեսպանատունը, որի ջանքերի շնորհիվ Իտալիայի խորհրդարանի արտաքին հարցերի հանձնաժողովում կասեցվեց ադրբեջանական նավթադոլարների ազդեցությամբ ծնված «Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում եւ գրավյալ տարածքներում» բանաձեւը:***

***Այդ եւ մի շարք այլ խնդիրների մասին «Ազգը» զրուցեց Իտալիայում Հայաստանի դեսպան Ռուբեն Կարապետյանի հետ, ում հետ զրույցը սկսեցինք դիվանագտական աշխատանքի խոչընդոտների մասին խոսակցությամբ նախ.***



- Իրեն հարգող յուրաքանչյուր երկրում արտաքին գերատեսչությունը սովորաբար զբաղեցնում է ամենահեղինակավոր եւ կենտրոնական շինությունը: Դա տուրք չէ այդ երկիր այցելող օտար պատվիրակություններին, այլ առաջին հերթին հարգանքի վերաբերմունք է սեփական արտաքին ճակատում աշխատող բարձրակարգ մասնագետների նկատմամբ, մարդկանց, որոնք ներկայացնում են իրենց երկիրն ու ժողովուրդը, դա պետական վերաբերմունք է դիվանագիտական գործունեության նկատմամբ, որը «մարդկային հարաբերությունների բարձրագույն արվեստն է»: Կցանկանայի, որ ՀՀ ԱԳՆ համակարգը նույնպես արժանանար առավել հոգատար ու հարգալից վերաբերմունքի պետության կողմից: Հակառակ դեպքում 21-ամյա անկախության ընթացքում մենք նորից կանգնած չէինք լինի երրորդ անգամ մի շենքից մյուսը տեղափոխվելու իրական հեռանկարի առջեւ:

Պետք է նաեւ հիշել, որ արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքականության արտացոլումն է: Անհնար է արտաքին ճակատում լուրջ հաջողություններ արձանագրել առանց պետության ներսում ընթացող դրական զարգացումներ ու բարեփոխումներ ապահովելու:

Տես էջ 4

# Կատալոնիային արգելեցին անցկացնել անկախության հանրաքվե

Իսպանիայի խորհրդարանը մերժել է Կատալոնիայում անկախության հանրաքվե անցկացնելու առաջարկությունը:

Նախաձեռնությամբ հանդես էին եկել Կատալոնիայի Հանրապետական ձախեր կուսակցության պատգամավորները: Սակայն խորհրդարանում մեծամասնություն կազմող Ժողովրդական կուսակցությունը, ինչպես նաեւ Իսպանիայի սոցիալիստական բանվորական կուսակցությունը եւ «Միասնություն, առաջընթաց եւ ժողովրդավարություն» կուսակցությունը դեմ էին քվեարկել, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Սեպտեմբերի վերջերին Կատալոնիայի կառավարության ղեկավար Արթուր Մասը առաջին անգամ հայտարարել էր իսպանական այդ նահանգում անկախության հանրաքվեի անցկացման հնարավորության մասին: Մադրիդի իշխանությունները կտրուկ հակազդել էին Մասի հայտարարությանը, ասելով, թե Կատալոնիայի կառավարությունը իրավունք չունի անկախության հանրաքվե անցկացնել առանց կենտրոնական իշխանությունների թույլտվության:

# SOS. մեր նաւը կ'ընկղմի՞

*1-ին էջից*

Ինչո՞ւ... որովհետեւ համոզուած ենք, որ զինեալ ընդդիմադիրները կրնան մեզի հետ հաշուեյարդար կատարել մեր չգործած մեղքերուն համար, որովհետեւ մենք որքան ալ մեզի յատուկ ջայլամութեամբ ըսենք. «բոլորը գիտեն, որ մենք չէզոք ենք», այնուամենայնիւ զինեալ խմբաւորումներէն շատեր մեզ իրենց թշնամի կը համարեն, պետութեան կողմնակիցներ կը սեպեն ու կ'ատեն մեզ, ատոր կողքին կան նաեւ մոլեռանդներ, որոնք ի բնէ մեր գոյութիւնը յանցանք կը սեպեն...

Ե՞րբ պիտի հանդարտի այս երկիրը, եւ երբ հանդարտի՝ որքա՞ն հայ մնացած պիտի ըլլայ հոս: Չեմ գիտեր: Շատ բան կախուած է «խաղաղութեան գործընթաց»-ի տեւողութենէն, երկիրը անիշխանական վիճակի հասնելէն կամ չհասնելէն (եթէ արդէն չէ հասած)... Եւ այս ամէնուն մէջ հայերը որեւէ դեր չունին ոչ որպէս անհատ եւ ոչ որպէս հաւաքականութիւն: Միակ ակնկալեալը այն է, որ երբ այս երկիրը խաղաղութեան հասնի՝ մնացեալ հայերն ալ իրենց ունեցածը պիտի ծախեն եւ... մնաս բարով Սուրիա... Որովհետեւ արդէն հայերու համոզում գոյացուցինք, որ մեզի հոս տեղ չմնաց: Այս եզրակացութեան յանգելնուս մէջ որպէս հաւաքականութիւն մենք ալ նոյնքան յանցաւոր ենք որքան մեզ հոս չուզողները, որովհետեւ անտէր մնացինք, անտէր մնացինք որպէս անհատ եւ որպէս հաւաքականութիւն: Որովհետեւ ոչ մէկ տեղական ղեկավար իրապէս չհետաքրքրուեցաւ, թէ ո՞վ գնաց, ո՞ւր գնաց, ընդհակառակը՝ Հալէպը առաջին լքողները պատասխանատու դիրքերու վրայ գտնուող անձինք եղան: ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ ՔԱՐՈԶԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՄԻ ԵՐԹԱՔ ըսելը ղրուշ մը չարժեց եւ անտէր ու հաւաքականութեան մը պատկանելու զգացում ունենալ չկարենալով մարդիկ իրենց գլխուն ճարին նայեցան: Միւս կողմէ, որպէս սուրիահայութիւն, մինչեւ այսօր առանձին կը զգանք մեզ եւ հարիւր հազար դոլար հանգանակուած է մէկ գիշերուայ մէջ թէ ոչ՝ մեզ չի հետաքրքրեր: Իմ քանդուած տունիս մասին մտածող չկայ, իմ մեռելս թաղողը ես եմ, այդ ալ քիչ յուղարկաւորներով, որովհետեւ գերեզմանոցներու ճամբան ինչպէս ամէն տեղ, կրնայ վտանգաւոր ըլլալ:

Հայաստանի անկախութեան տօնակատարութեան շատ սպասեցի, որ Հայաստանի նախագահը անդրադառնար սուրիահայութեան վիճակին, եւ հպարտ եմ ըսելու՝ որ ան յիշեց մեզ: Յետո՞յ: Թերեւս ամէն ինչ ժամանակի կը կարօտի, բայց... բայց ինչպէս չենք ըմբռներ, թէ արտակարգ պարագաները արտակարգ եւ արագ լուծումներ ոչ թէ կը պահանջեն, այլ կը պարտադրե՛ն, եւ ի զուր են առանց վիզայի օրերու համար կազմուող յանձնաժողովներն ու այստեղ-այնտեղ դիմելը Հայաստան ապաստանած հայերուն գործ հայթայթելու մտահոգութեամբ...

Ե՞րբ պիտի վերջանայ այս անհեթեթ եղբայրասպանութիւնը, անհաւատալի է, որ 21-րդ դարուն մեր կողմերը տիրողը կրօնական մոլեռանդութիւնն է, զոր շահագործելով կը քանդեն երկիրներ: Ինչո՞ւ:

Ես այս «ինչու»-ին կրնամ իմ պատասխանս ունենալ, ինչպէս բոլորս, բայց անօգուտ է, որովհետեւ իմ եւ միլիոնաւոր պարզ մարդոց պատասխանները ենթադրութենէ անդին պիտի չանցնին եւ, երկրորդ, ճիշդ ալ ըլլան՝ որեւէ օգուտ պիտի չտան մեզի մեր ...անզօրութեան պատճառաւ... Մինչ այդ տուժողները կը շատնան, եւ հիմա ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱԼԵՊԱՀԱՅ ԱՐԴԷՆ ՏՈՒԺԱԾ ԾԱՆՕԹ ԿԱՄ ԲԱՐԵԿԱՄ ՈՒՆԻ:

Վերադառնանք էականին: Ազգովին տէր կանգնինք այս գաղութին՝ յանուն այս գաղութին, նաեւ արեւմտահայութեան համար, նաեւ ամբողջ հայութեան համար:

Հալէպը կը մնայ «Մայր գաղութ»: Հալէպցին է արեւմտահայերէնը անբիծ ու մաքուր պահողը, հալէպահայերն են, որ միւս գաղութներուն ալ կրնան օգնել ազգային առումով մտաւորականներ պատրաստելու մէջ: Եթէ Հալէպը չքանայ, Պէյրութը չի բաւեր, եւ ամբողջ արեւմտահայութեան գոյութիւնը կը վտանգուի Սփիւռքի ամբողջ տարածքին: Հալէպի բացակայութեան պարագային գաղթօջախները պիտի «մատակարարուին» միայն Հայաստանէն՝ հայաստանցիներով-այսինքն պիտի կորսուի Սփիւռքի արեւմտահայ դիմագիծը, տեղի տալով արեւելահայության առջեւ, որուն այնքան ալ հոգը չէ ազգապահպանումը, վկայ՝ Մոսկուայի մեծաթիւ հայ գաղութը, որ լայն հնարաւորութիւններ ունենալով հանդերձ ամէնօրեայ մէկ հայկական դպրոց իսկ չունի:

Տխուր եմ, հոգիս կը ցաւի եւ իրատեսութեան հասնող յոռետեսութեամբ է որ այս ամէնը կը մտորեմ...

Հալէ՜պ, Հալէ՜պ...

Ի՞նչ վիճակ կը պատկերացնէ այսօր մեր սիրելի, անչափ սիրելի, անփոխարինելի քաղաքը:

Բազմաթիւ թաղամասեր քարուքանդ եղած են: Այրած է Փակ շուկայի մէկ մասը: Հարիւրհազարաւոր բնակիչներ լքած են իրենց քանդուած կամ վտանգուած տուները: Դպրոցները փակ են: Համատարած անգործութիւնը կ'իշխէ:

Հայերուս վիճակը աւելի լաւ չէ, մենք ալ տասնեակ զոհեր տուինք: Մեր ալ բազմաթիւ տուները քանդուեցան կամ այրեցան: Ամէն օր մեր թաղերուն մէջ պատահական եւ ոչ-պատահական արկեր կու գան, կը պայթին ու կ'աւերեն եւ կը սպաննեն, օրեցօր ընդլայնելով վնասուող տարածքները: Մեր եկեղեցիներուն մեծամասնութեան մէջ չենք կրնար պատարագ մատուցանել, դպրոցները փակ են, մասնակի դասեր տեղի կ'ունենան (տարբեր կեդրոններու մէջ) պաքալորիա եւ պրովէի դասարաններու համար, որոնց ներկայ կը գտնուի աշակերտութեան կէսէն նուազը, երբեմն մեծ պայթիւնի մը հետեւանքով՝ մէկ-երկու հոգի միայն:

Բերիոյ թեմի գրասենեակները փոխադրուած են «աւելի ապահով» վայրեր, փոխադրուած է նաեւ «Գանձասար»-ի խմբագրատունը: Մեր միակ թերթը ընդհատումներով լոյս կը տեսնէ տպարանի անապահովութեան հետեւանքով...

Գրեթէ բոլորս դարձած ենք կարօտեալներ, միայն ՀԲԸՄ-ն արդէն 1500 ընտանիքի նպաստ յատկացուցած է, Կեդրոնական Մարմինն ալ գործի անցած է, Ս.Օ.Խ. ը պատնէշի վրայ է,

Հայ Կաթողիկ եկեղեցին ալ,

Հայ Աւետարանականներն ալ,

Դեռ կայ Ճինիշեան յիշատակի ֆոնդը,

Կան այլ բարեգործական հաստատութիւններ, կամ փոքր ու մեծ հայրենակցական միութիւններ:

Բայց այս բոլորը ի վիճակի՞ են մէկ քանդուած կամ հրդեհուած տուն անգամ վերականգնելու:

Այս ամէնը քանի՞ ամիս կրնան նպաստներ բաժնել...

Տէր կանգնինք մեր գաղութին. տէր կանգնինք ազգովին, անյապաղ...

Հանապազօրեայ հացէն աւելի ապահովութեան կարիքը ունինք:

Այս մասին լրջօրէն մտածենք, առանց ջայլամի դերին մէջ մտնելու:

Պէյրութի մեր ղեկավարները կրնան կապեր ստեղծել եթէ... չունին:

SOS. մեր նաւը կ'ընկղմի...

**ՄԱՆՈՒԷԼ ՔԵՇԻՇԵԱՆ**
Հալէպ

# Օմբուդսմենը դիմել է վարչապետին

«Այսօր հայկական բանակ զորակոչված զինվորը չի կարող արդյունավետ կերպով պաշտպանել իր իրավունքները, քանի որ չունի բավարար տեղեկություն, թե բանակային ծառայության որ ձեւերն են նրան թույլատրված կամ արգելված: Այսինքն՝ «ոչ շարային» կամ «շարային սահմանափակումներով» ծառայության համար պիտանի ճանաչված զինծառայողը չգիտի իր համար վտանգավոր ծառայության տեսակները, այնինչ, ՀՀ սահմանադրության համաձայն, յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Վերոնշյալ սահմանադրական իրավունքի չապահովումը բացասաբար է ազդում ոչ շարային ծառայության համար պիտանի ճանաչված զինծառայողներին շարային ծառայության մեջ ընդգրկվելու խնդրի կարգավորման վրա»:

Մտահոգությունը մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանինն** է, ուղղված վարչապետ Տիգրան Սարգսյանին: Օմբուդսմենի ներկայացմամբ՝ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով նախատեսվում է 3 տիպի ծառայություն՝ շարային, ոչ շարային եւ շարային ծառայություն սահմանափակումներով, այսինքն՝ քաղաքացիների համար այդ պարտականությունները նախատեսված են միայն պաշտպանության նախարարության հրամանով եւ ամրագրված չեն օրենքով:

Անդրեասյանը փաստում է, որ վերոնշյալը հաստատվել է Օհանյանից ստացված պատասխանն ուսումնասիրելուց հետո, այնինչ, համաձայն սահմանադրության 42-րդ հոդվածի, ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: «Բացի դրանից՝ համապատասխան բժշկական հանձնաժողովներից որեւէ մեկի համար չի սահմանվում գործառույթ՝ տրամադրելու եզրակացություն, թե զինապարտին զինվորական ծառայության որ ձեւերն են հակացուցված: ՊՆ-ից հայտնել են, որ յուրաքանչյուր նորակոչիկի զորակոչվելուց 1-2 օր հետո կրկին նշանակվում եւ անցկացվում է բժշկական քննություն, եւ արդյունքները գրավոր զեկուցվում են զորամասերի հրամանատարներին, սակայն նշված պատասխանով չի հստակեցվում, թե որ իրավական ակտով է կարգավորվում սույն բժշկական 1-2 օրում անցկացումը, եւ թե ինչ ազդեցություն է ունենում մինչ այդ 3 բուժմարմիններից կայացված որոշումների վրա, որոնք հանդիսանում են վարչական ակտեր: Այսինքն՝ պարզ չէ, թե որ բուժզննման արդյունքներն են համարվում որպես հիմք զինծառայողին այս կամ այն ծառայությանը պիտանի ճանաչելու համար», ասված է նամակում:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրների արդիականությունն ու կարեւորությունը՝ Անդրեասյանը վարչապետին խնդրել է համապատասխան հանձնարարականով միջոցներ ձեռնարկելու խնդիրների լուծման նպատակով:

**Հ. Հ.**

# Հունգար մտավորականներն այցելել են Գուրգեն Մարգարյանի շիրիմին

Հունգարացի չորս մտավորականներ, որոնք ժամանել են Հայաստան, երեկ այցելել են Եռաբլուր պանթեոն՝ հայ սպա Գուրգեն Մարգարյանի շիրիմին, որտեղ նրանք հունգար ժողովրդի անունից ներողություն են խնդրել հայ ժողովրդից ու իրենց խոր վշտակցությունը հայտնել Գուրգեն Մարգարյանի ծնողներին:


ARMENPRESS

Հիշեցնենք, որ հայ սպան Հունգարիայում սպանվել է Ադրբեջանցի ոճրագործի կողմից, իսկ ոճրագործը բանտում իր պատիժը կրելու փոխարեն հիմա Ադրբեջանում ազատության մեջ է:

Հունգարիայի Ջոն Ուեսլի անվան աստվածաբանական քոլեջի ռեկտոր Գաբոր Իվանյին նշել է. «Մենք այստեղ ենք եկել ամոթի զգացումից դրդված: Ես ուզում եմ ձեզնից ներողություն հայցել՝ ներողություն»:

Գրող, հրապարակախոս Զորի Բալայանը, որը մտավորականների հետ նույնպես այցելել էր Գուրգեն Մարգարյանի շիրիմին, նշել է, որ հայ ազգը երբեք չի մոռանա կատարվածը, որը եւս մի անգամ հաստատեց Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում լինելու անհնարինությունը:

«Արմենպրեսից» տեղեկանում ենք, որ հունգար մտավորականների հետ հայ սպայի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու էին գնացել նաեւ Հայաստանի տարբեր ռազմական ուսումնարանների կուրսանտներ, ազատամարտիկներ, ուսանողներ, ովքեր կրում էին արդարությունը վերականգնելու կոչերով պաստառներ:

**Ի. Պ.**

# ԱԱԾ-ը «Սիվիլիթասից» փաստաթղթեր է առգրավում...

*1-ին էջից*

Ըստ հաղորդագրության՝ երեկ ԱԱԾ քննիչները այցելել են «Սիվիլիթաս» հիմնադրամ՝ առգրավելու Վարդան Օսկանյանին եւ Սիվիլիթաս հիմնադրամին առնչվող քրեական գործի վերաբերյալ փաստաթղթերը:

Մի ուրիշ, առավել քան հետաքրքրական տեղեկություն էր երեկ տարածել ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի մամլո խոսնակ **Իվետա Տոնոյանը**՝ որոշ իմաստով էլի կապված Օսկանյանի գործի հետ. Գագիկ Ծառուկյանը երեկ ընդունել էր ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնին, եւ, ըստ հաղորդագրության, կողմերը զրուցել են մեր երկրի արտաքին, ներքին քաղաքականությանը, տնտեսությանը վերաբերող մի շարք թեմաների շուրջ: Խոսք է գնացել նաեւ Օսկանյանի մասին. ԱՄՆ դեսպանն ասել է, որ խիստ մտահոգված է կատարվածով եւ ամենայն ուշադրությամբ հետեւում է բոլոր զարգացումներին, բացի այդ՝ կատարվածը լուրջ հարված է արդարադատությանն ու ժողովրդավարական արժեքներին (երեւում է՝ այդ խիստ մտահոգությունը ստիպել էր երեկ նույնությամբ կրկնել օրեր առաջ իր արած հայտարարությունը Օսկանյանի գործով մտահոգության մասին): Ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյային մտահոգում է նաեւ այն հանգամանքը, որ այսօրինակ գործողություններ են իրականացվում հատկապես Հայաստանում նախագահական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: Գագիկ Ծառուկյանն էլ նշել է. «Իմ հանձնարարությամբ գործն ուսումնասիրվել է լավագույն իրավաբանների կողմից, ովքեր հաստատել են Վարդան Օսկանյանի դեմ ներկայացված բոլոր մեղադրանքների անհիմն լինելը: Կուսակցության քաղաքական խորհրդի նիստի ընթացքում ես անձամբ եմ հանձնարարել խմբակցության պատգամավորներին հանդես գալ խիստ եւ սկզբունքային հայտարարություններով եւ ելույթներով», ասել է ԲՀԿ նախագահը՝ խոստանալով հետեւողական է լինել, որպեսզի գործն անաչառ քննություն ունենա եւ կայացվի օբյեկտիվ որոշում:

**Ս. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# «Հարսնաքար»-ի գործ. Պաշտպանները դատավորին բացարկ հայտնեցին, սակայն դատավորը մերժեց

Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մեկնարկած «Հարսնաքար»-ի գործով հերթական դատական նիստն ուղեկցվեց ընդմիջումներով: Նախ, գործով մեղադրյալ Գարիկ Մարգարյանի պաշտպան Մարինա Թովմասյանն էր ուշացել, այնուհետեւ ամբաստանյալ Արման Բաղդասարյանի պաշտպան Միհրան Պողոսյանը դատարանից ժամանակ խնդրեց գործի երկրորդ մասին ծանոթանալու համար: Նախագահող դատավոր Դավիթ Հարությունյանը հայտարարեց 20, այնուհետեւ 5 րոպե ընդմիջում:

«Դատարանն անաչառ դատավարություն չի իրականացնում, մենք նրան չենք վստահում եւ այդ պատճառով դատավոր Դավիթ Հարությունյանին բացարկ հայտնելու մասին միջնորդություն ենք ներկայացնում», ընդմիջումից հետո հայտարարեց Գարիկ Մարգարյանի պաշտպան **Մարինե Թովմասյանը**: Խորհրդակցական սենյակում որոշակի ժամանակ անցկացնելուց հետո դատավորը մերժեց պաշտպանի միջնորդությունը:




Հիշեցնենք, որ «Հարսնաքար»-ի աշխատակիցներ Գարիկ Մարգարյանին, Դավիթ Ադամյանին, Արթուր Բաբլոյանին, Արման Բաղդասարյանին, Արման Խաչատրյանին ու Նորայր Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ռազմական բժիշկներ Վահե Ավետյանին, Արտակ Բայադյանին, Գարիկ Սողոմոնյանին, Արկադի Աղաջանյանին եւ Էդգար Նիկոյանին ծեծելու համար: Համաձայն մեղադրական եզրակացության, ծեծի հետեւանքով Վահե Ավետյանի առողջությանը դիտավորությամբ պատճառվել է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, որն անզգուշորեն առաջացրել է մահ: Գործով անցնող տուժողներից երկուսին՝ Արտակ Բայադյանին եւ Գարիկ Սողոմոնյանին, պատճառվել է միջին ծանրության վնաս՝ առողջության տեւական քայքայումով, իսկ Արկադի Աղաջանյանին եւ Էդգար Նիկոյանին մարմնական վնասվածքներ չեն պատճառվել:

«Հարսնաքար»-ի գործը բաղկացած է 3 հատորից, նրանցից յուրաքանչյուրը կազմում է 400 էջ:

Հ. Հ.

# «Ստալինյան ռեժիմ «Ավան եւ Քանաքեռ-Զեյթուն» գազային տնտեսությունում»

«Ավան եւ Քանաքեռ-Զեյթուն» գազային տնտեսության պետ Միեր Զանվելյանը, որ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի քրոջ ամուսինն է եւ նրա միջնորդությամբ ու աջակցությամբ է ստանձնել այդ պաշտոնը, կարող է հայտնվել սկանդալի կենտրոնում: Պատճառն այն է, որ Զանվելյանի արդեն նախկին աշխատակիցները հավաստիացնում են, որ նա ոչ միայն ստալինյան ռեժիմ է մտցրել կազմակերպությունում, այլեւ նրանցից գումարներ է պահում:

Հասարակական գործիչ, բնապահպան **Սիլվա Ադամյանն** էլ երեկվանից «Ավան եւ Քանաքեռ-Զեյթուն» գազային տնտեսության նախկին աշխատակից է:

Մինչ աշխատանքից հեռացնելը մի քանի անգամ հրավիրել են տնօրենի սենյակ եւ պահանջել, որ աշխատանքից ազատման դիմում գրի՝ պատճառաբանությամբ, թե հասարակական գործունեությունը խանգարում է գազի ծառայության աշխատանքներին:

«Բայց եթե ես դիմում գրեի, կստացվեր, որ պարտություն եմ կրում, եւ մինչեւ վերջին րոպեն ընդդիմացել եմ, մինչեւ նա զեկուցագիր գրեց, եւ գազի ծառայության անվտանգության աշխատակիցները եկան եւ ստիպեցին, որ բացատրագիր գրեմ, թե ինչու եմ հարազատ դստեր հարսանիքին պատրաստվելու համար խնդրել 3 օր աշխատանքի չներկայանալ»:

Ադամյանն ասում է, որ բացատրագիրը գրել է, սակայն միեւնույն ժամանակ տեղեկացրել, որ դատի է տալու տնօրենին:

Նա պատմում է, որ խնդիրները սկսվեցին մայիսի 30-ին, երբ «Երեւան գազ» ընկերության տարածքային ծառայության աշխատակիցներին հավաքեցին եւ հայտարարեցին, որ 100 դոլարով պետք է կրճատվի աշխատավարձը:

Դա նշանակում է, որ իրենց աշխատավարձը կրճատվել է 25-30 տոկոսով:

Աշխատակիցների տրամաբանական հարցին՝ ինչո՞ւ, պատասխան չի եղել: Կուլիսային զրույցներից տեղեկացել են, թե իբր պատճառն այն է, որ հսկիչները չեն կարողանում բնակիչներին լավ ստիպել, որ գազի գումարը վճարեն:

Դրանից օրեր անց կազմակերպության 40 աշխատակիցներ կառավարության շենքի դիմաց էին: Նրանք բողոքի ակցիայի ժամանակ պատմել էին, որ սա առաջին դեպքը չէ, երբ խախտվում են իրենց իրավունքները: Բացի դրանից՝ աշխատակիցներին ստիպում են աշխատել հանգստյան օրերին, նաեւ արձակուրդին՝ առանց վարձատրության: Սակայն այս ամենին աշխատակիցները երկար ժամանակ աչք են փակել, քանի որ ապրել է պետք, իսկ այսօր Հայաստանում աշխատանք գտնելը, մեղմ ասած, այնքան էլ հեշտ չէ: Ինչ վերաբերում է այն խոսակցությանը, թե հսկիչները չեն կարողանում գումար հավաքել, իրենք կառավարության շենքի դիմաց պատմում էին, որ պատճառը ոչ թե իրենց վատ աշխատանքն է, այլ բնակչության տնտեսական վատ պայմանները, որ չեն կարողանում վճարել հարկերը:

Սիլվա Ադամյանը պատմում է, որ կառավարության շենքի առջեւ տեղի ունեցած ցույցից հետո Ավանի թաղապետը հավաքում է ՀՀԿ անդամ բոլոր կանանց եւ ստիպում աշխատանքից ազատման դիմում գրել: Ադամյանը հիշում է, որ այդ օրվանից իրենց աշխատավայրում տիրող վախի մթնոլորտը կրկնապատկվել է: Զանվելյանի մարդիկ բողոքողների նկատմամբ հետապնդումներ են իրականացնում, վախեցնում, որ լռեն: Ավելի ուշ, ինչպես Ադամյանն է ասում, տնօրենը ժողով է հրավիրել: Բնապահպանը բառ առ բառ հիշում է, թե ինչ է ասել տնօրենն իր ելույթում: «Սա ձեզ համար Եվրոպա չէ, սա Հայաստանն է, եթե դեմոկրատական արժեքներ եք ուզում՝ մեկնեք Եվրոպա»:

Ադամյանը վստահ է, որ վերոնշյալ հրապարակային մեղադրանքներից հետո գործազուրկ կդառնա նաեւ ամուսինը, որը երկար տարիներ աշխատել է «Երեւանգազ»-ում: Սակայն դա չի խանգարի, որ իրենք շարունակեն պայքարել իրենց իրավունքների համար: Ադամյանը հավելում է, որ դիմելու է նաեւ նախագահին՝ տեղեկացնելու, որ երկրի ամենախոշոր կազմակերպություններից մեկում ոտնահարում են մարդկանց իրավունքն ու նպաստում կոռուպցիայի տարածմանը: Մեր փորձերը՝ զրուցելու Միեր Զանվելյանի հետ, ապարդյուն անցան: Գործավարուհին ասաց, որ տնօրենը տեղում չէ, եւ չգիտի՝ երբ կլինի:

Հ. Հ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Պետությանը հասցված վնասի դեպքում՝ անձնական պատասխանատվություն

Մինչ կառավարության նիստի սկսվելը երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** տեղեկացրեց, որ առողջապահության ոլորտի ուսումնասիրության արդյունքները կքննակվեն առաջիկա խորհրդակցության ժամանակ:

Շինարարության ոլորտի մասին խոսելով վարչապետը նշեց, որ ուսումնասիրությունների արդյունքները «շատ խայտառակ պատկեր» են բացահայտել: «Կոնկրետ պետական բյուջեից 270 մլն դրամ էր հատկացվել Մեծ Մանթաշ գյուղում դպրոցաշինության համար: Այս պահի դրությամբ, նախնական արդյունքներով շուրջ 200 մլն դրամն ուղղակի փոշիացված է: Ավելին, դպրոցը երրորդ աստիճանի վթարային է, եւ նշանակում է, որ այդ ծախսերը մենք ուղղակի անիմաստ ենք կատարել: Նմանատիպ իրավիճակ բացահայտվել է Մասիսում՝ 5-րդ դպրոցում», ասաց Տիգրան Սարգսյանը, ավելացնելով, որ գործերն արդեն հանձնվել են դատախազություն: «Մենք ուշադիր հետեւելու ենք այս գործերին, որպեսզի մեղավորներն անպայման պատժվեն: Նոր գործերը նույնպես անպայման հանձնելու ենք դատախազություն», նշեց նա:

Տիգրան Սարգսյանը երեկ նաեւ հայտարարեց, որ եթե մինչ այժմ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի հայտնաբերած բացահայտումներից հետո բավարարվել ենք գումարները վերականգնելու հանձնարարականներով, ապա այսուհետեւ այդպես չի լինելու: «Այսուհետեւ լինելու են պատիժներ, մեղավոր անձինք կրելու են պատասխանատվություն, մանավանդ եթե պետական բյուջեին հասցվում է ֆինանսական վնաս», եզրափակեց վարչապետը:

# Անապահով ուսանողների ուսման վարձը կփոխհատուցի պետությունը

Հայաստանի ճարտարագիտական ազգային լաբորատորիա հիմնադրելու եւ անապահով երեխաներին բուհերում ուսման վարձի փոխհատուցման մասին կառավարության ընդունած որոշումները երեկ լրագրողներին ներկայացրեց կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը**:

Խոսելով Հայաստանի ճարտարագիտական լաբորատորիա հիմնելու մասին՝ նախարարը հայտնեց, որ դրա համար կներդրվի 6,2 մլն դոլար, ինչն աննախադեպ ներդրում է անկախության տարիների ընթացքում նման լաբորատորիա ստեղծելու համար: Ըստ այդ ծրագրի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանում կստեղծվեն 30 նոր լաբորատորիաներ: Վերոնշյալ 6,2 մլն դոլարի կեսը կտրամադրի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, 1,5 մլն դոլարը՝ «Նեյշընլ Ինստրումենտս» հայտնի ընկերությունը, 350 հազար դոլարը՝ Հայաստանի կառավարությունը եւ 650 հազար դոլարը՝ ճարտարագիտական համալսարանը: Նախատեսվում է, որ արդեն եկող տարվա հունվար-փետրվարին այս լաբորատորիան կբացվի, ինչը թույլ կտա բարձր որակավորում ունեցող ճարտարագիտական կադրեր թողարկել:

Ինչ վերաբերում է անապահով երեխաների՝ պետական բուհերում սովորելու ուսման վարձը պետության կողմից փոխհատուցելուն, ապա Արմեն Աշոտյանը տեղեկացրեց, որ դա վերաբերելու է «Փարոս» համակարգում ընդգրկված երեխաներին, որոնք ունակություններ կունենան սովորել բուհերում, բայց չեն ունենա վճարելու հնարավորություններ: Կփոխհատուցվի ուսման վարձի գումարի 50-100 տոկոսը, ինչի շնորհիվ, ըստ նախարարի, հաջորդ տարի բարձրագույն ուսումնական հաստատություններում կընդգրկվեն 1000 անապահով երեխաներ, իսկ 2015-ին նրանց թիվը կհասնի 2500-ի:

Նախարարն անդրադարձավ նաեւ բուհերի 2011-2012 թթ. ուսումնական տարվա ամփոփիչ արդյունքներին, տեղեկացնելով, որ ակադեմիական պարտքերի, այսինքն, վատ սովորելու պատճառով 1324 ուսանողներ դուրս են մնացել բուհերից: Նրանք ունեցել են 12 կրեդիտից ավելի պարտքեր: Բժշկական համալսարանից դուրս են մնացել 200 ուսանող, Գավառի պետական համալսարանից՝ 217, ագրարային համալսարանից՝ 170, ճարտարագիտականից՝ 163, տնտեսագիտականից՝ 154, Երեւանի պետական համալսարանից՝ 120 ուսանող: Սա, ըստ Արմեն Աշոտյանի, կառավարության որդեգրած այն սկզբունքի իրագործումն է, որ բուհեր ընդունվելը հեշտ կլինի, իսկ ավարտելը՝ դժվար: Նա նաեւ հայտնեց, որ ուսման վարձը վճարել չկարողանալու պատճառով բուհերից դուրս է մնացել 130 ուսանող:

# Վճարովի ավտոկայանատեղիները կառանձնանան կարմիր գծանշմամբ

Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգն ու գետնանշման ձեւը երեկ հաստատվեց կառավարության կողմից:

Համաձայն այդ որոշման, փողոցի երթեւեկելի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղի զբաղեցրած տարածքն առանձնացվում է փողոցի երթեւեկելի հարեւան գոտուց՝ ավտոկայանատեղիի երկայնական սահմանագծի կարմիր գույնի խզվածքներով գետնանշմամբ: Եթե փողոցի երթեւեկելի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղում թույլատրվում է ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ կայանում, ապա ավտոկայանատեղի տարածքն առանձնացվում է նաեւ լայնակի սահմանագծով՝ կարմիր գույնի հոծ գետնանշմամբ:

Ավտոկայանատեղերի կազմակերպումը իրականացվելու է համայնքի ավագանու որոշման հիման վրա: Այս հարցը ներկայացնելով՝ Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը**, ի պատասխան վարչապետի հարցի, ասաց, որ առաջին օպերատորներն այստեղ կգործեն 3-4 ամիս անց: Նախատեսվում է, որ կտեղադրվեն ժամանակակից սարքավորումներ, եւ մայրաքաղաքում կլինեն եվրոպական չափանիշներին համապատասխանող ավտոկայանատեղիներ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Հարցազրույց

# Իտալիայի խորհրդարանում հուլիսին հակահայկական բանաձեւ է կասեցվել

### Հարցազրույց Իտալիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Կարապետյանի հետ

*1-ին էջից*

**- Իտալիայի մեր դեսպանատունը երկու անձ է սպասարկում՝ դեսպանը եւ մի դիվանագետ, մինչդեռ Ադրբեջանն այդ երկրում մեծ լոբբինգ է իրականացնում, շատ մեծ փոխադարձ շահեր կան, որոնց պետք է դիմակայի մեր դեսպանատունը: Այդ իրավիճակում ինչպե՞ս եք աշխատում:**

- Իտալիան կարեւոր երկիր է Եվրոմիությունում, եւ տնտեսությամբ երրորդ երկիրը լինելով՝ իր ձայնն ունի մեզ համար կենսական Մերձավոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրական ծովի տարածաշրջանում: Միջազգային եւ տնտեսական համագործակցության ներուժ կա Հայաստանի եւ Իտալիայի հարաբերություններում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին՝ Իտալիան Ադրբեջանի հետ 8,5 միլիարդի առեւտուր ունի՝ նավթ է ներմուծում հիմնականում: Բայց վերջին մեկ տարում իրավիճակը շատ ավելի բարդացավ հայերիս աշխատանքի համար, որովհետեւ հիմա քննարկվում է Ադրբեջանից Թուրքիայով, Հունաստանի եւ Ալբանիայի միջոցով դեպի Իտալիա ուղղվելիք գազամուղի վերաբերյալ նախագիծը, ու Նաբուկկոյի հետ միասին զույգ գազամուղերի ճանապարհի ընտրության համար Ադրբեջանը փորձում է խաղացնել տարբեր երկրների, այդ թվում՝ եւ Իտալիային: Իտալիայի արտգործնախարարը եւ էկոնոմիկայի նախարարը հայտարարում են, որ իրենց համար ռազմավարական ծրագիր է գազատարի անցկացումը, սա նպաստելու է սեփական աղբյուրների դիվերսիֆիկացիային եւ Ռուսաստանից կախվածության նվազմանը:

**- Վերադառնանք ԼՂՀ-ի վերաբերյալ աննպաստ բանաձեւին:**

- Հուլիսին Իտալիայի խորհրդարանի արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ ներկայացվեց մի բանաձեւ՝«Իրադրությունը Լեռնային Ղարաբաղում եւ գրավյալ տարածքներում», որը քննարկման պետք է դրվեր հուլիսի 26-ին: Դեսպանության ջանքերով 4 օրվա ընթացքում այնպիսի մի կազմակերպված իրադրություն ստեղծվեց (արձակուրդային շրջան, պառլամենտը գնում էր արձակուրդ), որ կարողացանք կասեցնել բանաձեը: 4 օրվա մեջ 38 հանդիպում ենք ունեցել բոլոր քաղաքական խմբակցությունների հետ, ու հուլիսի 26-ին արտաքին հարցերի հանձնաժողովը որոշեց, որ քննարկման չի դնելու այդ բանաձեւը, որովհետեւ թերի է: Իմ հանդիպումներում այնպիսի սկզբունքային հարցեր ենք բարձրացրել, որ անգամ Իտալիայի խորհրդարանի հայտնի դեմքերը ասում էին, որ սա սկզբունքի եւ շահի ընտրության հարց է: Եվ հասկանալի է, որ շատ դժվար է կատարել այդ ընտրությունը, երբ Եվրոպան շատ վատ տնտեսական վիճակում է, ու նաեւ քաղաքական խնդիր է դառնում՝ երկրի շահերը պետք է հաշվի առնվեն: Հարցն իհարկե չի փակվել՝ հետաձգվել է, գործընթացը շարունակություն կունենա երեւի, հիմա հրավիրվում են փորձագետներ, որոնք իրենց կարծիքները պետք է հայտնեն բանաձեւի վերաբերյալ հետագա որոշումը կայացնելու համար: Խորհրդարանի արտաքին հարցերի հանձնաժողովում այդ բանաձեւի կասեցումից 8 օր հետո 42 պատգամավոր, հասկանալով, որ նախորդ բանաձեւը հաջողություն չունեցավ արտաքին հանձնաժողովում, զուգահեռ երկրորդ գործընթացը սկսեցին եւ մի նոր, ավելի խայտառակ բանաձեւ բերեցին, ուղղակի պատմական փաստերի խեղաթյուրմամբ՝ «Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում»: Այդ 42-ի հետեւում կանգնած է ադրբեջանական նավթային լոբբին: 5 օր առաջ հեռախոսազանգ ստացա Իտալիայի պառլամենտի պատգամավորների պալատի նախագահ Ջան Ֆրանկոֆինիից, որն ասաց, թե այս բանաձեւը օրակարգ չի մտնի, քանի որ զուգահեռ գործընթաց կա արտաքին հանձնաժողովում, մինչեւ այնտեղ փորձագիտական գնահատականներ չտրվեն՝ չեն կարող այլ գործընթաց սկսել: Այսինքն՝ մեր դեսպանությունը եւ մյուս կառույցները պետք է անընդհատ աշխատեն այս ուղղությամբ:

**- Այսօր Հայաստան է ժամանում հայ-իտալական պատգամավորական խումբը՝ այցի նպատակի մասին կուզեի պատմեք:**

- Երբ երեք տարի առաջ դեսպան նշանակվեցի Իտալիայում, ստեղծեցինք հայ-իտալական պատգամավորական խումբ՝ 19 հոգուց, որի պատգամավորների թիվն այսօր աճել, 56 է դարձել: Այսօր խմբի 18 պատգամավոր ժամանելու է Հայաստան, այցը վաղուց ծրագրված էր: Խումբը հանդիպելու է երկրի նախագահի, խորհրդարանի նախագահի հետ, ԱԳՆ-ում է հանդիպում նախատեսված, Վեհափառի հետ նույնպես: Պատվիրակության մեջ ընդգրկված իտալացի պատգամավորներն այնպիսի մարդիկ են, որոնք հասկանում են հայկական կողմի խնդիրները եւ իրենց գործունեության ուղենիշ են ընտրել սկզբունքները, եւ ոչ թե շահը: Բարեկամության խմբի հետ պատրաստել ենք մի օրենքի նախագիծ, որը ապրիլի 24-ը Իտալիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր կհայտարարի պաշտոնապես: Հիշեցնեմ, որ Իտալիայի խորհրդարանի պատգամավորների պալատը 2000 թվականին ընդունեց բանաձեւ՝ որը համերաշխություն հայտնեց Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձեւին՝ հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հետ կապված: Սա շատ կարեւոր նախաձեռնություն է, որտեղ նաեւ ցեղասպանության շարունակականությունն է ցույց տրվում՝ հասած 1988-ի Սումգայիթի, Կիրովաբադի հայկական ջարդեր:

**- Իսկ հոկտեմբերի 18-ին Հայաստան է ժամանում Իտալիայի պաշտպանության նախարարը, այդ մասին խոսենք:**

- Արդեն երկու տարի դեսպանությունն աշխատում է այդ շատ կարեւոր այցելության վրա, որը կայանալու է հոկտեմբերի 16-18-ը: Աշխատանք է տարվել, որ ստորագրվելիք փաստաթղթի մակարդակը բարձրացվի մինչեւ միջկառավարական համաձայնագիր, սա նաեւ առաջին համաձայնագիրը կլինի, որ Իտալիան կստորագրի ԱՊՀ որեւէ երկրի հետ: Համաձայնագրով ռազմական համագործակցություն է նախատեսվում տարբեր ուղղություններով՝ ռազմարդյունաբերությունից մինչեւ տեղեկատվության փոխանակում, կադրերի փոխանակում եւ վերապատրաստում:

**- Ընդհանրապես ո՞ր ուղղություններն է կարեւորում մեր դիվանագիտությունը Իտալիայի հետ աշխատանքում:**

- Դեսպանությունը մի կարեւոր գիծ է վերցրել այս երեք տարիների ընթացքում, որ կարողանանք իտալական պետության շահագրգռվածությունն առաջացնել՝Հայաստանը դիտարկելու որպես Հարավային Կովկասում իրենց շահերի հիմնական հենարան, պատմական եւ մշակութային համատեղ ընդհանրությունների հետ մեկտեղ՝ ունենալու համար նաեւ իտալացիների հասարակակական համակրանքը: Հայաստան այցելող զբոսաշրջիկների 20 տոկոսը մեր պաշտոնական վիճակագրությամբ իտալացիներ են, դրան մենք հասանք այս վերջին տարիների ընթացքում: Զբոսաշրջային 5-6 ոլորտում մենք շնորհանդես կազմակերպեցինք Իտալիայի տարբեր քաղաքներում, որտեղ մասնակցեցին իտալական 500-ից ավել տուրիստական գործակալություններ: Հայաստանը իտալացիների համար ավետյաց երկրի, միստիկ երկրի անուն ունի, իտալացիք շատ հետաքրքրված են Հայաստանով, եւ աստիճանաբար տեսնում եմ՝ ո՞նց է աճում այդ հետաքրքրությունը:

Դեսպանատան աշխատանքի կարեւոր ուղղություն էր տնտեսական համագործակցությունը Եվրոմիությունում մեծագույն տնտեսական պոտենցիալ ունեցող երկրի հետ: Վերջին օրերին էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն էր Հռոմ այցելել: Վերջին լավ նորությունն էլ ասեմ՝ անցյալ տարի մեր առեւտրաշրջանառությունն աճեց 40 տոկոսով, 6 ամսվա կտրվածքով մենք 100 տոկոսանոց աճ ունենք: Առեւտրաշրջանառության ծավալը մոտենում է 300 մլն դոլարի տարեկան, ու դա դեռ մեծ ծավալ չէ: Իտալիայից առնում ենք ամեն ինչ՝ քարի մշակման սարքավորումներից սկսած, գյուղատնտեսական մշակման սարքերից՝ մինչեւ կոշկեղեն, տեքստիլ արտադրանք եւ այլն: Հայկական շուկայում 60 իտալական ընկերություն ունենք, որոնք աշխատում են իտալական կապիտալով՝ կա՛մ ամբողջությամբ, կա՛մ համատեղ: Դեսպանության գործունեության թիրախը Հայաստանում իտալական ներդրումներ ապահովելն ու արտահանումը խթանելն է:

**- Անցած տարի Հայաստանի նախագահն այցելեց Իտալիա...**

- Անցյալ տարվա ընթացքում Հայաստանի նախագահի երկու այց է եղել Իտալիա, հունիսին մեր նախագահը ներկա գտնվեց Իտալիայի վերամիավորման 100-ամյակին՝ Ջորջիո Նեապոլիտանոյի հրավերով, այնուհետեւ դեկտեմբերին Հռոմ եւ Վատիկան, այնուհետեւ Վենետիկ: Գիտեք՝ Վենետիկում գրատպության 500-ամյակն էր, եւ այդ առիթով այդ այցը կազմակերպվեց: Մենք դրան տվեցինք քաղաքական հնչեղություն: Այցը լայնորեն լուսաբանվեց այն աստիճան, որ մեր հարեւանները ստիպված եղան տարբեր պատրվակներով մտածել՝ ինչպես հակազդեն: Նախագահի այցի ընթացքում մենք խաչքար տեղադրեցինք Հռոմի սրտում հենց, չնայած այնտեղ որեւէ բան տեղադրել չի կարելի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանման տիրույթում է: Իտալիայի քաղաքապետարանը որոշում կայացրեց բացառություն անել հայկական խաչքարի համար՝ միլիոնավոր տուրիստներ դա կարող են տեսնել: Հազարամյակով կապեր ունենալով Հռոմի հետ՝ ոչ մի մշակութային հետք չէր պահպանվել, այս խաչքարը լրացնում է բացը՝ որպես բարեկամություն եւ հիշողություն: Անցյալ տարի դեկտեմբերին տեղի ունեցած Հայաստանի նախագահի այցի ժամանակ Իտալիայի հանրապետություն մեր դեսպանությանը հաջողվեց ոչ միայն ապահովել Իտալիայի նախագահի բարձր հովանավորությունը, այլ նաեւ հասնել նրան, որ ուղերձի մեջ Իտալիայի նախագահն հստակ ընդգծեց Հայաստանի եւ հայ ժողովրդի մեծագույն ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Մշակութային միջոցառումների շարքը, որ եղավ նախագահի այցի ժամանակ, նաեւ նպաստեց հետագայում Իտալիայի պառլամենտում կատարվողի մեղմմանը՝ ստեղծելով մի այնպիսի մթնոլորտ, որը մտածելու տեղիք տվեց իտալացիներին: Իհարկե, շատ վստահ չի կարելի լինել, որ վաղն էլ սկզբունքները կընտրվեն, եւ ոչ թե շահերը, սակայն դրա համար էլ միշտ աչալուրջ պետք է լինել ոչ միայն Իտալիայում, այլեւ Եվրոպական յուրաքանչյուր երկրում, քանի որ ուժն է միշտ որոշիչ եղել, ու մեզնից է կախված մեր հաջողությունը, եւ անգամ՝ ներքին քաղաքականությունից է կախված արտաքին քաղաքականը:

**- Ինչ վիճակում է հայկական համայնքը:**

- Երեք հազար հայ է մնացել երկրում, բայց բավական կազմակերպված: Այս տարի 21 տարվա մեջ առաջին անգամ աջակցության ծրագրով պատվիրակություն է մեկնել ԼՂՀ՝ դեսպանության ուղղորդմամբ, հիմա ունենք նաեւ «Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչ Իտալիայում, եւ ամեն տարի իտալահայությունը մոտավորապես հարյուր հազար եվրոյի ծրագիր պետք է իրականացնի:

**- Ի՞նչ փաստաթուղթ է ստորագրվելու այսօր Մատենադարանում:**

- Իտալիայից մենք կարող ենք սովորել մշակութային ժառանգության պահպանում. այսօր Մատենադարանի հետ իտալական կողմը (իտալիայի ձեռագրերի վերականգնման եւ հիվանդությունների ախտորոշման կենտրոնական ինստիտուտի ներկայացուցիչը) ստորագրելու է համաձայնություն, որով նախատեսվում է մասնագետների վերապատրաստում Իտալիայում, որոնք որ կվերադառնան Մատենադարան եւ կօգտագործեն իրենց գիտելիքները: Հայ ուսանողներին կրթաթոշակներ են տրամադրվելու, որ Իտալիայում հինգ տարի սովորեն՝ ինչպես են Իտալիայում պահպանում ձեռագրերը: Նաեւ՝ փորձագետների փոխանակում է նախատեսված: Վերջնական նպատակ կարող է լինել Մատենադարանում այդպիսի կենտրոն-ինստիտուտ ունենալը:

Մի նախաձեռնության մասին էլ պատմեմ՝ Դադիվանք երկրորդ այցելությունն է լինելու, բացել ենք Դադիվանք հիմնադրամ, որը զբաղվելու է հայկական Դադիվանքի վերականգնման գործով: Խումբն ամբողջությամբ իտալացիներից է կազմված: Այսօր իրենք գալու են եւ կմեկնեն Դադիվանք: Պատրաստվելու է նախագիծ, որը մեզ համար ունի կարեւորագույն նշանակություն՝ հետագայում նաեւ դպրոց է հիմնվելու, որը կսովորեցնի ուսանողներին՝ ինչպես վերականգնել հուշարձանները: Անցած տարի առաջին գիրքը ԼՂՀ-ի վերաբերյալ իտալերենով տպագրեցինք՝ Նիկոլայ Հովհաննիսյանի ԼՂՀ-ի մասին գիրքը:

Մոտակա ժամանակներում կլինի տուրիզմի նախարարի այցելությունը Հայաստան, նա պետք է դիտարկի Հայաստանի ոլորտային հնարավորությունները: Իսկ նոյեմբերին ունենք Իտալիայում հնագիտության ամենամեծ ցուցահանդեսը՝ կոչվում է «Հնագիտության զբոսաշրջային ցուցահանդես»: Անցյալ տարի դա Թուրքիայում էր կազմակերպվել, այս տարի Իտալիայի Պալերմոյի շրջան, Պեստում է: Մեկշաբաթյա ցուցահանդես է, որտեղ աշխարհի 98 երկիր է ներկայացված լինում, ծրագիրը պատրաստում է մշակույթի նախարարությունը, մենք պատվո հյուրն ենք դառնալու եւ կենտրոնական ստենդը լինելու է Հայաստանինը:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**




*Հայաստանի եւ Իտալիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված միջոցառումներից մեկում*

ԱԶԳ

Միջազգային

Քառասուն օր առաջ փալթաջի Սաֆարովը արտահանձնվեց Հունգարիայից Ադրբեջան, որտեղ Իլհամ Ալիեւը անմիջապես ներում շնորհեց հունգարական դատարանի կողմից ցմահ դատապարտված, հետեւաբար «ոչ սովորական» մարդասպանին:

Իրադարձությունը բուռն արձագանք ստացավ Հայաստանում, զգացողությունն այնպիսին էր, կարծես թե Գուրգեն Մարգարյանի դաժան սպանությունը կրկնվեց, հենց նոր եղավ...

# 40 օր անց

Այս քառասուն օրվա ընթացքում Եվրոպայի խորհրդում քննարկվեց հարցն ու Խորհուրդը հայտարարություն ընդունեց, որով դատապարտեց մարդասպանին շնորհված ներումը: Ավելի ուշ Իլհամ Ալիեւը պետք է ընդգծի, որ սա «Եվրոպայի խորհրդի երկրորդ հակաադրբեջանական բանաձեւն է», ու ցինիկաբար պիտի հավելի. «Եթե հայը սպաներ ադրբեջանցուն, ապա այսպիսի աղմուկ չէր լինի»: Այնուհետեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Անդերս Ֆոգ Ռասմուսենը**, ժամանելով Երեւան եւ Բաքու, շեշտեց, որ անթույլատրելի է մարդասպանի հերոսացումը: Հիշեցնենք, որ Գուրգեն Մարգարյանը սպանվեց հենց ՆԱՏՕ-ի կազմակերպած սեմինարի ընթացքում, հետեւաբար ՆԱՏՕ-ն չկարողացավ լիարժեք հոգալ իր իսկ կազմակերպած սեմինարի մասնակիցների անվտանգությունը: Ճիշտ է, Ֆոգ Ռասմուսենն այս մասին գերադասեց լռել: ԱՄՆ նախագահին անձամբ, ինչպես նաեւ պետքարտուղարությունը անմիջապես դատապարտեցին մարդասպանին ներման արժանացնելու Ալիեւի որոշումը, իսկ նախագահ Օբաման առհասարակ հարցի առնչությամբ պարզաբանումներ պահանջեց նաեւ Հունգարիայից: Բուդապեշտը «պարզաբանեց»՝ վարչապետ Վիկտոր Օրբանի մակարդակով: Եվրոպայում հայտնի «վիկտատորը», որի իշխանության օրոք հունգարական թերթերը, որպես ազատ խոսքի հանդեպ պետական ոտնձգության դեմ բողոք, լույս տեսան մաքուր էջերով, իր ներկայացրած «պարզաբանման» մեջ նշեց, թե «Բուդապեշտը գործել է համաձայն 1983-ի Ստրասբուրգյան կոնվենցիայի՝ դատապարտված անձանց արտահանձնման վերաբերյալ»: Օրբանն ակնարկեց, այնուհետեւ հունգարական արդարադատության նախարարությունն ու այլ պաշտոնյաներ հստակեցրին, թե «մենք գործել ենք բացառապես կոնվենցիայի համաձայն, այդ Ադրբեջանն է, որ խախտել է մեր պայմանավորվածությունները»: Այս մասին նույն ձեւակերպումներով նշեցին ԵԽԽՎ-ում օրերս ավարտված նստաշրջանի մասնակից հունգարական պատվիրակության անդամները, իսկ Եվրոպայի խորհրդի նախագահ Յագլանդը տարակուսանք հայտնեց, թե ինչպե՞ս կարելի է մարդասպանին հերոսացնել. այսպես պատասխանելով հարցին, թե ինչպե՞ս է ինքը վերաբերվում Սաֆարովի հերոսացմանը, ասել էր. «Ի՞նչ, հերո՞ս... դա պարզապես անթույլատրելի է...»:

Մարդասպանին ներում շնորհելու Ալիեւի քայլը խիստ դատապարտվեց նաեւ ՀԱՊԿ-ից, այս կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան թերեւս ամենակոպիտ քննադատությամբ հանդես եկավ գործընթացի առնչությամբ:

Սփյուռքի տարբեր գաղթօջախներում հայերը բողոքի ցույցեր, պիկետներ կազմակերպեցին, որոնց մասնակցում էին նաեւ տվյալ երկրների առանձին գործիչներ, մտավորականներ... Հունգար պատմաբանը, Հայաստանում հայերից ներողություն խնդրեց իր երկրի կատարած քայլի համար, հետեւաբար ընդունելով գործընթացում Բուդապեշտի մեղավորության չափը:

Ժամանակակից աշխարհում, որտեղ միայն ասում են, թե հաղթել են ֆաշիզմին, Ալիեւի քայլի վերաբերյալ կամ լռեցին, կամ մեղադրեցին... Եվ միայն Ալիեւն ինքը հայտարարեց, թե իրեն չի մտահոգում ադրբեջանական բանակի սպա Սաֆարովին հայրենիք վերադարձնելու, այնուհետեւ ներման արժանացնելու իր որոշման շուրջը աղմուկն ու «հայերի քննադատությունը»... Անշուշտ, այս գործընթացը դեռ իր մասին բազմիցս հիշեցնելու է, քանի որ «հային սպանելու համար հերոսական ընդունելության արժանանալով»՝ փալթաջի Սաֆարովը նոր էջ բացեց ԼՂ հակամարտության խաղաղ բանակցությունների տարեգրքում, թվում է, թե բեկումնային էջ...

Երեկ, երբ արտահանձնումից անցել էր ուղիղ 40 օր, մարդասպան Սաֆարովն ամուսնացավ: Ադրբեջանական Vesti.azը տեղեկացնում է, որ մարդասպանի ընտրյալը՝ Շեբնեմ Գյուլմամեդովան է եւ որ «հարսանեկան արարողության ժամանակ դեռ վաղ առավոտվանից ձեռնարկվել են պետական անվտանգության խիստ ուժեղ միջոցառումներ» (հավանաբար վախեցել են Բաքվում ապրող շուրջ 30 հազար հայերի՞ց, կամ գուցե Բաքվի 30 հազար հայե՞րն են վախեցել Սաֆարովի հարսանիքին մասնակցելուց - Հ. Ա.): «Արարողությունը բացել է մուղամի վարպետ Արիֆ Բաբաեւը, հանդես են եկել երգիչներ Վասիֆ Մահերամլին, Սեւդա Յաղեւաեւան, Մանաֆ Աղաեւը...», իհարկե մարդասպանի հարսանեկան արարողության ժամանակ չեն մոռացվել ռազմական երգեր կատարել՝ այդ պատվին արժանացել է Շեմիսան Ալիզամանլին...

Այս բոլորը Ադրբեջանում հայտնի արտիստներ են, ադրբեջանցի մտավորականներ, նրանք հասարակ ադրբեջանցու հարսանիքին չեն երգում, հետեւաբար փալթաջի Սաֆարովը ազգային արժեք է... Կամ ազգին պարտադրված արժեք. ուզում ենք հավատալ, որ ճիշտ տարբերակը երկրորդն է... Ու ուզում ենք հավատալ, որ Սաֆարովի որդին այլ Ադրբեջանում կապրի:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

ԵՎՐՈԳՈՏԻ

# Անորոշություն Մերկելի հունաստանյան այցից հետո

## *Պարզություն կլինի հոկտեմբերի 18-ին*




Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հոկտեմբերի 9-ին Աթենք կատարած այցելության ընթացքում խոսել է Հունաստանի ներկայիս տնտեսական դժվարությունների մասին, հույս հայտնելով, որ կառավարության ձեռնարկած բարեփոխումները կտան իրենց արդյունքը: Սակայն նա չի կարողացել լավատեսություն ներշնչել եւ համոզել հույներին, որոնք կանցլերին դիմավորել են բողոքի բազմամարդ ցույցերով, հեռանալու պահանջներով եւ այլն: Ցուցարարներից ոմանք հրապարակայնորեն այրել են կեռխաչ՝ սվաստիկա կրող մի դրոշ:

2007-ից ի վեր Հունաստան կատարած առաջին պաշտոնական այցի ժամանակ Մերկելը մասնավորապես ասել է. «Գիտակցում եմ, որ Հունաստանը չափազանց ծանր ժամանակներ է ապրում, եւ որ բազմաթիվ հույներ տառապում են»: Ցուցարարների թշնամական ընդունելությանն արժանանալով՝ կանցլերը հույս է հայտնել, որ 6 տարի տնտեսական նահանջ ապրող երկիրը կմնա եվրոյի գոտում:

Աթենքի կառավարությունը այդ խոսքերի մեջ նկատել է նոր վարկերի հատկացման հավաստիացումներ: Սակայն քաղաքական վերլուծաբան Սպիրոս Ռիզոպուլոսը «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում այն միտքն է հայտնել, թե Մերկելի այցը անպատեհ էր եւ ձախողվեց: «Դա հաղորդակցական գործողություն էր Գերմանիայում 2013-ին կայանալիք ընտրություններից առաջ: Իրականում Անգելա Մերկելը խնայեց իր խոսքերը եւ ոչ մի երաշխիք չտվեց Հունաստանին 31,5 մլրդ եվրո նոր վարկի հատկացման առնչությամբ, ինչը կենսական է այս երկրի համար: Աթենքը խնդրում է երկու տարով երկարաձգել բյուջեի պակասորդի կրճատման ժամկետը՝ 2014-ի փոխարեն վերջնաժամկետ դարձնելով 2016-ը», ասել է Ռիզոպուլոսը:

Հունաստանի կառավարությունը պատրաստվում է խնայողության նոր, խիստ միջոցների փաթեթ ընդունել եւ ուզում է վարկատուներին համոզել, որ կկարողանա կատարել իր պարտավորությունները, միայն թե ֆինանսական օգնություն ստանա: Ամեն ինչ պարզ կդառնա հոկտեմբերի 18-ին, երբ վարկատուների եռյակը (Եվրոպայի Կենտրոնական բանկ, ԱՄՀ, ԵՄ) իր հերթական զեկույցը կներկայացնի Եվրոպայի խորհրդին:

# «Գյուլարգեյթ». ի՞նչ է թաքցնում «սառցալեռան երեւացող մասը»

Միլլի մեջլիսի նախկին պատգամավոր Գյուլար Ահմեդովան երեկ ԶԼՄ-ների համար տարածել է հայտարարություն, որով խնդրել է «այլեւս չանդրադառնալ» իրեն: Աղմկոտ սկանդալի մեջ հայտնված նախկին խորհրդարանականը տեղեկացրել է, որ չունի «սենսացիոն տեսահոլովակ» եւ չի պատրաստվում «հրաժարվել նախաքննության մարմնի հետ համագործակցությունից»: Ահմեդովայի հայտարարության մեջ կար մի արտառոց ընդգծում. նա իրեն շարունակում է համարել իշխող կուսակցության անդամ, թեեւ ավելի վաղ «Ենի Ազարբայջան»-ի գործադիր քարտուղարն ասել էր, որ նա «կորցրել է վստահությունը եւ չի կարող լինել մեր շարքերում», ինչից հետո մամուլը գրել էր, որ Գյուլար Ահմեդովան հեռացվել է ԵԱ-ից:

Ահմեդովայի հայտարարությունը ժամանակի առումով գրեթե համընկավ Ադրբեջանի գլխավոր դատախազի մամուլի քարտուղար Էլշադ Աբդուլլաեւի տարածած տեղեկատվությանը, որով հերքվում է նախկին պատգամավորի բնակարանում խուզարկություն անցկացրած լինելու մասին ԶԼՄ-ների տեղեկատվությունը: Այստեղ ուշագրավն այն է, որ Ահմեդովան անուղղակիորեն ակնարկել էր իր կողմից նույնպես կոմպրոմատային տեսահոլովակներ տարածելու հավանականությունը, ուստի բացառված չէ, որ նրա բնակարանում դատախազությունը փնտրած լինի նյութեր, որոնց տարածումը կարող է իշխանություններին ավելի ծանր կացության մեջ դնել:

Trend գործակալությունը նշված գործով որոշ պարզաբանումներ է ստացել Բաքվի քաղաքային դատախազությունից, որն էլ իրականացնում է նախաքննությունը: Հայտնի է դարձել, որ Գյուլար Ահմեդովայի, նախկին Միջազգային համալսարանի ռեկտոր Էլշադ Աբդուլլաեւի եւ մի երրորդ անձի մասնակցությամբ տեսահոլովակների տարածման փաստով հարուցվել է քրեական գործ՝ Ադրբեջանի քրօր-ի 178.3.2., այն է՝ «խարդախություն, այսինքն՝ ուրիշի ունեցվածքին տիրանալը կամ ուրիշի ունեցվածքին տիրանալու իրավունքի ձեռքբերումը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու միջոցով խոշոր չափի վնաս հասցնելը, հոդվածով: Գյուլար Ահմեդովան հարցաքննվել է... որպես վկա:

Քրօր-ի մեջբերված հոդվածի տրամաբանությամբ, գործով պետք է լինի անձ, որը խաբեությամբ տիրացել կամ փորձել է տիրանալ ուրիշի ունեցվածքին կամ ձեռքբերել դրան տիրանալու իրավունք կամ վստահություն չարաշահելու միջոցով հասցրել խոշոր չափի վնաս, եւ անձ, ում ունեցվածքին տիրացել են խաբեությամբ կամ ում վստահությունը չարաշահելու ճանապարհով հասցվել է խոշոր չափի վնաս: Տեսահոլովակի նյութերից պարզ է, որ Գյուլար Ահմեդովան Էլշադ Աբդուլլաեւից ստացել է 500 000 դոլար կամ մանաթ, բայց նույնքան էլ պահանջում է, որպեսզի «Ալիեւի կազմած ցուցակը կոտրելով» վերջինիս դարձնի պատգամավոր: Խոսակցությանը ներկա է նաեւ մի երրորդ անձ՝ կին, որը ենթադրաբար Գյուլար Ահմեդովայի օգնականն է:

Եթե Գյուլար Ահմեդովան հարցաքննվել է որպես վկա, ապա ո՞վ է խաբեությամբ տիրացել Էլշադ Աբդուլլաեւի փողերին, ո՞վ է նրանից եւս նույնքան գումար պահանջել, ո՞վ է նախկին ռեկտորին հորդորել «այսուհետեւ աշխատել Ռամիզ մուալլիմի համար»: Ըստ երեւույթին, հենց այստեղ էլ «ծածկվում է սառցալեռը»: Խոսքը Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի մասին է, որ վերջերս հանդես էր եկել շատ կտրուկ հայտարարությամբ, թե տեսահոլովակում իր անվան հիշատակումը «լավ մտածված սադրանք է»: Ընդ որում, նա «սադրանքի» թիրախ դիտել էր տվել ոչ թե իրեն, այլ՝ «իշխանությանը»: Իսկ թե ո՞ւմ է պատկանում Ադրբեջանում իշխանությունը, ոչ ոքի համար գաղտնիք չէ:

Ադրբեջանական մամուլում եղան եւ շարունակվում են ակնարկները, թե «տեսահոլովակի տարածման թիկունքում կանգնած է նախագահի աշխատակազմի իրավապահ մարմինների աշխատանքը կոորդինացնող վարչության պետ Ֆուադ Ալեսքերովը, որ Ռամիզ Մեհթիեւի պաշտոնի վրա վաղուց աչք ունի»: Միաժամանակ, սակայն, նույն աղբյուրները չափազանց զգուշորեն ենթադրում են, որ Ալեսքերովը «առանց ազդեցիկ հովանավորների հազիվ թե համարձակվեր գրոհել Ռամիզ Մեհթիեւի ուղղությամբ»:

Որոշ ենթադրությունների համաձայն, Ռամիզ Մեհթիեւի դեմ կոմպրոմատային պատերազմ են մղում Փաշաեւները՝ Մեհրիբան Ալիեւայի հայրական ընտանիքը: Վերջինս բավարարված չէ իշխանության մեջ ներկայացվածությամբ եւ բիզնես քվոտաներով: Բավական տեւական ժամանակ է, ինչ, մասնավորապես, խոսվում է Հաֆիզ Փաշաեւին՝ Մեհրիբան Ալիեւայի հորեղբորը ԱԳ նախարար նշանակելու մասին: Իսկ Ռամիզ Մեհթիեւի հետ կոնֆլիկտը խորացել է այն բանից հետո, երբ վերջինս համոզել է Իլհամ Ալիեւին՝ անցկացնելու սահմանադրական հանրաքվե, որով վերացվել է երրորդ ժամկետով նախագահ ընտրվելու արգելքը: Մինչ այդ լրջորեն քննարկվել է նախագահի պաշտոնին Մեհրիբան Ալիեւայի թեկնածությունը առաջադրելու տարբերակը:

«Գյուլարգեյթը», այսպիսով, խորանալու դեպքում իշխող վարչախումբը կարող է բախվել «սառցալեռան չերեւացող մասի»՝ Ռամիզ Մեհթիեւի կոշտ հակազդեցությանը: Այդ է թերեւս պատճառը, որ ընտրվել է տարբերակ, որի դեպքում Գյուլար Ահմեդովային մեղադրանք չի առաջադրվի, իսկ քրեական գործը կձգձգվի, քանի որ Էլշադ Աբդուլլաեւի՝ Ադրբեջանից դուրս գտնվելու պատճառով «անհնար կլինի առերեսում կազմակերպել» նրա եւ Ահմեդովայի միջեւ: Հաշվարկն այն է, որ ընդդիմությունը չի կարողանալու օգտագործել հարմար առիթը եւ կոնսոլիդացնել դժգոհ ընտրազանգվածը Իլհամ Ալիեւի դեմ նախագահի պաշտոնի համար պայքարում, եւ «գյուլարգեյթն» աստիճանաբար մոռացվելու է:

Դա հավանական է, եթե Իլհամ Ալիեւին հաջողվի զսպել Փաշաեւներից վրեժխնդիր լինելու՝ Ռամիզ Մեհթիեւի հավանական գործողությունները: Այնպես որ, հնարավոր է՝ ամեն ինչ սկսվի ոչ թե փողոցից, ինչից երկյուղում է Իլհամ Ալիեւը, այլ հենց իշխանության ներսից:

**Վ. Ա.**

## Մշակույթ

Երեկվա օրը` Թեքեյան մշակութային միության, մրցանակաբաշխությանը նվիրվեց` այս անգամ «Հայկաշեն Ուզունյան» 2010-2012 գեղարվեստական-գիտական գրականության մրցանակին, որի հիմնադիրը Սփյուռքում եւ Հայաստանում հայտնի ազգային-հասարակական գործիչ **Հայկաշեն Ուզունյանն** է, որի կամքով 1966 թվականից այս մրցանակը շնորհվում է հայ գիր ու գրականության լավագույն մշակներին. վերջին 10 տարիներին այդ ընտրությունը եւ հանձնման արարողությունը տեղի է ունենում Հայաստանում: Եվ կարեւորը, որ նրա` կյանքից հեռանալուց հետո դուստրերը շարունակեցին հոր ազգանպաստ գործը` հավատարիմ այն սկզբունքներին ու գաղափարներին, որոնցով ապրում եւ առաջնորդվում էր ՀԲԸ-Միության, Ռամկավար ազատական կուսակցության, Թեքեյան մշակութային միության հեղինակավոր ղեկավար այրերից մեկը:

ռաջին համաշխարհային) մասնակից դաշնակից երկրների (Ռուսաստան, Բրիտանիա, Ֆրանսիա եւ այլն) արխիվներին:

Գրքի կարեւորությանն անդրադառնալով` Միհր Կարապետյանն ասաց, թե առանց նման փաստաթղթերի ուշադիր զննության,

զգուշավորություն եւ անաչառություն են պահանջում, ինչը եւ հաջողվել է սույն գրքի հեղինակին: Իսկ ուսումնասիրողի եզրակացությունը` Հայաստան-Սփյուռք հարաբերությունների առումով, որքան աներկբա, նույնքան դասական ձեւակերպում կա-



*Լավրենտի Բարսեղյանը ելույթի պահին:*

# «Հայկաշեն Ուզունյան» մրցանակաշնորհման արարողություն` ԹՄՄ-ում

Այսօրիսի ուղղվածությամբ էր մրցանակաշնորհման արարողության` ԹՄՄ նախագահ **Ռուբեն Միրզախանյանի** բացման խոսքը, երախտիք` մրցանակի հիմնադրին առ նրա հավատարմությանը ազգային գաղափարներին եւ հարգանք` հիշատակին:

Տերունական աղոթքից եւ օրհնության խոսքից հետո Ռ. Միրզախանյանը հայտարարեց այս տարվա երեք մրցանակակիրների անունները` պատմ. գիտ. դոկտոր **Լավրենտի Բարսեղյանը**` «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում` 1915-1918 թթ. օտարերկրյա պետությունների վկայություններ» հատորի, պատմական գիտությունների թեկնածու **Քնարիկ Պետրոսյանը**` «Հայաստան-Սփյուռք հարաբերությունները 1988-2010 թթ.» ուսումնասիրության եւ Բեյրութից **Պեպո Սիմոնյանը**` «Ակնթարթներ մարդու եւ կեանքի առօրեայէն» գրքի համար, համապատասխանաբար այդ անձինք եւ նրանց մրցանակակիր աշխատանքները ներկայացրին պատմական գիտ. դոկտոր, պրոֆ **Միհր Կարապետյանը**, ԵՊՀ դոցենտ **Էդիկ Ջոհրաբյանը** եւ բան. գիտ. դոկտոր. «Սփիւռք-գիտակրթական կենտրոնի» տնօրեն **Սուրեն Դանիելյանը**:

Լ. Բարսեղյանը ներկայացրեց իր «փոքր»` ընդամենը 650 էջից բաղկացած աշխատությունը, փոքր, որովհետեւ նյութի` ընդլայնվելու հեռանկարը բավականին մեծ է: Իսկ նյութը առավել քան հետաքրքրական եւ անհրաժեշտ է. դա 7 տարբեր երկրների արխիվներում պահվող 1915-ին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի լավագույն վկայությունների ծաղկաքաղն է` մի քանի օտար լեզուներով նախապես լույս տեսած: Հեղինակը առավել ուշադրություն է դարձրել գերմանական, ավստրո-հունգարական, ամերիկյան զեկուցագրերին, փաստաթղթերին` նկատի առնելով հատկապես թուրքական կողմի այն պնդումները, թե` պետք չէ հավաս ընծայել պատերազմին (Ա-



*Թալին Ավագյանը մրցանակներ է հանձնում Քնարիկ Պետրոսյանին (ձախից):*

ամենօրյա մանրակրկիտ աշխատանքի, հնարավոր չէ քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության բնագավառում լուրջ ուսումնասիրության: Բանախոսը լավագույնս բնութագրեց Լավրենտի Բարսեղյանին` իբրեւ բազմաշնորհ, բազմաչարչար, եռանդուն գիտական աշխատողի, որին չաշխատելիս պարզապես հնարավոր չէ տեսնել: Գնահատվեց նրա ծանրակշիռ ավանդը մեզ համար մեծ կարեւորության ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադրման, մասնագիտական աշխատակազմի ձեւավորման, ցեղասպանագիտության համակարգված ուսումնասիրության սկզբնավորման, այս ոլորտում գիտնականներ պատրաստելու, ներկայում թանգարանագիտության եւ այլ ուղղությամբ:

Հաջորդ մրցանակակրին` Քնարիկ Պետրոսյանին եւ նրա աշխատությունը ներկայացնող Էդիկ Ջոհրաբյանը ուշադրություն դարձրեց գրքի մի շարք արժանիքներին` հատկապես Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ամբողջական, բազմաբովանդակ, համակողմանի ներկայացմանը եւ ժամանակագրային առանձնահատկությանը, նկատելով, որ հին պատմության շարադրանքը` հիմնված արխիվային նյութի վրա, շատ ավելի տարբեր է ժամանակակից պատմության թեմատիկ մշակումից, որովհետեւ վերջինիս պարագայում գործող նուրբ հանգամանքները ավելի

րելի է համարել. Հայաստանի անվտանգ զարգացումն է միայն, որ կարող է պահպանել Սփյուռքը ձուլման վտանգից:

Հաջորդ մրցանակակիրը` Պեպո Սիմոնյանը հիվանդ էր եւ ներկա չէր արարողությանը: Նրա գրական վաստակն ըստ արժանվույն ներկայացրեց Սուրեն Դանիելյանը: «Ակնթարթներ մարդու եւ կյանքի առօրեայէն» հեղինակային խորագիրը ավելի քան ընդգրկուն է. մեր ապրած կյանքն է սա, երկար ու ձիգ ճանապարհը` երբեմն այսպես, ակնթարթ թվացող:

Ս. Դանիելյանի անդրադարձը` բավական ամբողջական ներկայացրեց բանաստեղծին` գրական առաջին քայլերից, անդրանիկ ժողովածուից սկսած` նրա բանաստեղծական-գրողական ըմբռնումներն ու դավանանքը, որին բնորոշ է քնարական-հուզական-թեքեյանական շունչը, նախ եւ առաջ: Սակայն ինչ է բանաստեղծը սփյուռքում. նա ե՛ւ հրապարակագիր է, ե՛ւ խոհագիր, ե՛ւ ուսուցիչ, այդպես եւ` Պեպո Սիմոնյանի պարագայում: Այս նոր ժողովածուն, ըստ բանախոսի, յուրատեսակ պատուհան է` բացված աշխարհին` սեփական կենսափորձով վավերական, բանաստեղծական իր ընկալումները խորապես ենթակայական են, միաժամանակ` հոգեւոր վերապրումներ. այդպիսին է Բեյրութին նվիրված շարքը, ուր բնակավայրը զուտ միջավայր չէ, այլ հոգու միջավայրն է:

Հետաքրքրական էր Ռոմեն Կոզմոյանի հուշը` Պեպո Սիմոնյանի թունդ կուսակցականությունը (հնչակյան) բնորոշող:

Ավարտին **Թալին Ավագյանը**` Հայկաշեն Ուզունյանի ավագ դուստրը` շնորհավորելով հանձնախմբին եւ մրցանակակիրներին, մտահոգված էր սփյուռքից ստացված սակավաթիվ գրքերով: «Գրողները պակսեր են եւ մեր դպրոցները կփակվին սփիւռքի մեջ, կարդացող պիտի չըլլա: Միայն Հայաստանո՞վ պիտի բավարարվինք» հարցը հրապարակային հնչեց:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

## Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

**2012-2013 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելություն (Հեռակա ուսուցում, անվճար հիմունքներով)**

1. Համաշխարհային պատմություն - Է.00.02 - 1տեղ
2. Նորագույն շրջանի հայ գրականություն - Ժ.01.02 - 1տեղ
3. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /մաթեմատիկա/ - ԺԳ.00.02 - 1տեղ
4. Սոցիալ-մշակութային գործունեության տեսություն և կազմակերպում - ԺԳ.00.05 - 1տեղ
5. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն - ԺԹ.00.05- 1տեղ

Ասպիրանտուրայի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավասարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ, հանձնել են քննություն օտար լեզվից և համակարգչից օգտվելու հմտություններ առարկայի տարբերակված ստուգարք հաղթահարելով հետևյալ անցումային շեմերը`

Համաշխարհային պատմություն, Սոց.մշակութային գործունեության տեսություն և կազմակերպում, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն

1. Անգլերեն լեզու - 61
2. Ֆրանսերեն լեզու - 300
3. Գերմաներեն լեզու - 80
4. Համակարգչից օգտվելու հմտություններ - 25

Նորագույն շրջանի հայ գրականություն

1. Անգլերեն լեզու - 79
2. Ֆրանսերեն լեզու - 400
3. Գերմաներեն լեզու - 100
4. Համակարգչից օգտվելու հմտություններ - 20

Դասավանդման, դաստիարակության մեթոդիկա /մաթեմատիկա/

1. Անգլերեն լեզու - 54
2. Ֆրանսերեն լեզու - 200
3. Գերմաներեն լեզու - 60
4. Համակարգչից օգտվելու հմտություններ - 35

**Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.**

1. Դիմում համալսարանի ռեկտորին նշելով ընտրած մասնագիտությունը:
2. Մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմի և գնահատականների ներդիրի պատճենները, բացառությամբ այս տարվա շրջանավարտների, որոնց թույլատրվում է ներկայացնել ավարտական տեղեկանք:
3. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և չորս լուսանկար (3x4 չափի):
4. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):
5. Ռեֆերատ մասնագիտությունից առնվազն 20 էջի սահմաններում, մասնագիտական ամբիոնի կողմից գրավոր դրական գնահատականով:

Դիմորդները հանձնում են ընդունելության քննություն մասնագիտական առարկայից: «Բավարար» գնահատական ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Մասնագիտական քննությունից հավասար գնահատական ստանալու դեպքում մրցույթն իրականացվում է հաշվի առնելով հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության:

ա/ «Օտար լեզու» և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայից ստացած տարբերակված ստուգարքների գնահատականները:

բ/ Հրատարակված գիտական աշխատանքների քանակը:

գ/ Մագիստրոսի կամ բարձրագույն կրթության մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը:

դ/ Մագիստրոսական ատենախոսության կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի պաշտպանության գնահատականները:

ե/ Միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում, օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 31-ը:

Ընդունելության քննությունները կազմակերպվում են 2012թ. նոյեմբերի 1-ից 8-ը:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով` Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, ասպիրանտուրայի բաժին, հեռ. 59-70-78

ՌԵԿՏՈՐԱՏ

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ` Կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը`

1. Բնակելի տուն, ընդ. մակերեսն է` 446.65 ք.մ, սանհանգույց` 7.90 ք.մ., օժանդակ շինություն` 153.80 ք.մ., շինություն` 23.90 ք.մ., պարիսպ` 32.65 գծամետր եւ հողամաս` 0.1190 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է` ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 21 փող., թիվ 23 տուն: Լոտի մեկնարկային գինը` 392700000 ՀՀ դրամ:

2. Բնակարան, ընդ. մակերեսն է` 105.75 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է` ՀՀ, ք. Երեւան, Նորքի 2-րդ մ/շ, Մոլդովական փող., շենք 4/1, բն. 34: Լոտի մեկնարկային գինը` 32100000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել` ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ` աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար` կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գների 2%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով` 29.10.2012թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը` 30.10.2012թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով, բայց ոչ պակաս հատման գներից: Լոտերը սակարկվելու են ըստ ներկայացված հերթականության: Աճուրդի ավարտը` 30.12.2012թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ն` վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին` ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-15 հեռախոսահամարով:

# Մարզական

## Յուրա Մովսիսյան. «Կաշխատեմ հավաքականում էլ արդյունավետ գործել»

*Իտալացիների հետ խաղում հաջողության հասնելու հարցում իրենց վճռորոշ խոսքը պետք է ասեն Հայաստանի հավաքականի հարձակվողները: Այսօր հավաքականի առջեւի գծում հանդես եկող Հենրիխ Մխիթարյանն ու Յուրա Մովսիսյանը համապատասխանաբար Ուկրաինայի եւ Ռուսաստանի առաջնությունների լավագույն ռմբարկուներն են, սակայն ցավոք առայժմ նրանց չի հաջողվում նույնպիսի արդյունավետություն դրսեւորել նաեւ մեր ընտրանու հանդիպումներում: Յուրա Մովսիսյանը Կրասնոդարից նոր էր ժամանել Երեւան, ուստի հավաքականի առաջին մարզմանը չմասնակցեց, սակայն սիրով համաձայնվեց հարցազրույց տալ:*


ՖՈՏՈԼՈՒՐ

**- Յուրա, դու ՌԴ առաջնության լավագույն ռմբարկուն ես: Որքանո՞վ է դա օգնում հավաքականում հանդես գալուն:**

- Լավագույն ռմբարկու լինելը շատ է օգնում, քանի որ վստահություն ես ձեռք բերում սեփական ուժերի նկատմամբ, խաղդ ավելի հաջող է ստացվում: Ճիշտ է, մյուս կողմից նման պարագայում մրցակիցները ավելի աչալուրջ են լինում քո նկատմամբ, փորձում են վնասազերծել քեզ ու թույլ չտալ գրավելու դարպասը: Ցավոք, առայժմ չի հաջողվում հավաքականում էլ հաճախակի գոլեր խփել: Կաշխատեմ այդ բացը լրացնել իտալացիների հետ մրցավեճում:

**- Իտալացիների խաղն ուսումնասիրե՞լ եք:**

- Հավաքների ժամանակ միշտ էլ ուսումնասիրում ենք մեր մրցակիցների խաղը, մշակում հանդիպման մարտավարությունը: Բնականաբար, Իտալիայի հավաքականի խաղն էլ ուսումնասիրել ենք, քանի որ մշտապես հետեւում ենք թե ազգային ընտրանու, թե առաջնության հանդիպումներին:

**- Ի՞նչ ակնկալիքներ ունես իտալացիների հետ խաղից:**

- Կարծում եմ, որ իտալացիներին հաղթելու հնարավորությունները մեծ են, քանի որ խաղում ենք սեփական հարկի տակ: Ակնկալում եմ լեփլեցուն տրիբունաներ, որոնց առկայությունը մեզ կոգեւորի եւ մեծ լիցքեր կհաղորդի:

**- Մրցակցի ֆուտբոլիստներից ո՞ւմ կառանձնացնես:**

- Յուրաքանչյուրին: Անհատապես կնշեի Բալոտելիին, Պիռլոյին, Բուֆոնին: Այսպես կարող եմ բոլորին էլ թվել: Սակայն առավել հայտնիները այդ երեք ֆուտբոլիստներն են:

**- Իտալացիների պաշտպանությունը քեզ չի՞ սարսափեցնում:**

- Ոչ: Հայրս ինձ միշտ մի բան է ասում. «Դու էլ ես տղա, նա էլ, թե կարող ես, հաղթիր մրցակցիդ»: Հուսով եմ, որ մենք լավ կխաղանք: Ես մրցակցի բոլոր ֆուտբոլիստներին էլ հարգում եմ, սակայն խաղադաշտում ոչ մի զիջում չի լինելու:

**- Լեգեոնականների վրա ինչպե՞ս է ազդում հավաքականում երկար ժամանակ չխաղալը:**

- Չի ազդում: Եթե խաղային պրակտիկա ունես ու մշտապես հանդես ես գալիս ակումբում, հավաքականում խաղալն ավելի հեշտ է:

**- Իտալացիների հետ խաղում մեր հավաքականի կադրային փոփոխություններն ինչպե՞ս կանդրադառնան հանդիպման ելքի վրա:**

- Կարծում եմ, որ այդ հարցին ավելի ճիշտ կպատասխանի հավաքականի գլխավոր մարզիչը: Բոլորս էլ հասկանում ենք, որ իտալացիների հետ խաղում բացակայող ֆուտբոլիստներն ինչպիսի կարեւոր դեր են խաղում մեր թիմում: Այժմ նրանց փոխարեն խաղալու հնարավորություն է տրվելու այլ ֆուտբոլիստների, որոնք պետք է ապացուցեն, որ արժանի են հավաքական հրավիրվելու:

**- Իսկ Սարգիս Հովսեփյանի բացակայությունը որքանո՞վ կազդի խաղի վրա:**

- Դժվար է այդ հարցին պատասխանելը: Թերեւս առաջին անգամ վերջին տարիներին հարկ կլինի խաղալ առանց Հովսեփյանի: Իհարկե, դժվար է լինելու: Այն ֆուտբոլիստը, որին բախտ կվիճակվի փոխարինելու Հովսեփյանին, պետք է շատ լավ իրեն դրսեւորի, որպեսզի Սարգսի բացակայությունը չզգացվի:

**- Բուլղարիայի հավաքականի հետ խաղի մասին ի՞նչ կասես:**

- Ցավալի է, որ պարտվեցինք, քանի որ մեր հավաքականն ավելի լավ էր խաղում: Մենք չկարողացանք օգտագործել մեր հնարավորությունները, իսկ ահա մրցակիցը գոլ խփեց ու հաղթեց:

**- Հարցազրույցներից մեկում ասել էիր, որ քեզանով հետաքրքրվում են այլ ակումբներ, սակայն ցանկանում ես երկարաձգել պայմանագիրդ «Կրասնոդարի» հետ: Արդյոք ակումբում պայմաններն այդքան գոհացուցի՞չ են:**

- Չեմ ասել, թե պայմանագիրը կերկարաձգեմ, քանի որ ժամկետի ավարտին դեռ 1,5 տարի կա: Հավանաբար ասել եմ, որ այդպիսի ցանկություն ունեմ: Բայց դեռ պարզ չէ, կմնա՞մ «Կրասնոդարում», թե՞ ոչ: Այլ ակումբներից առաջարկներ ունեմ, որոնք իմ գործակալները քննարկում են: Առայժմ հստակ որեւէ բան չկա:

## Հայ սուսերամարտիկներից լավագույնն Էմիլ Դանիելյանն է

Երկարատեւ ընդմիջումից հետո Երեւանում կրկին անցկացվեց սուսերամարտի միջազգային մրցաշար: Սլավոնական համալսարանի մարզադահլիճում իրենց հարաբերությունները պարզեցին Հայաստանի, Իրանի, Քուվեյթի եւ Վրաստանի 81 սուսերամարտիկներ:

Հայաստանի ներկայացուցիչներից միայն Էմիլ Դանիելյանին հաջողվեց հաղթող դառնալ: Ճկասուսերակիրների մրցավեճում Էմիլը պարտության մատնեց իր բոլոր մրցակիցներին ու կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին:

Մյուս 3 գլխավոր մրցանակներին արժանացան Վրաստանի հավաքականի անդամները: Ճկասուսերակրուհիների պայքարում հաջողությունն ուղեկցեց Թեոնա Գոգլիձեին: Խոցասուսերակիրների տղամարդկանց մրցումներում լավագույնը Միխայել Միխայելյանն էր, իսկ կանանց մրցավեճում հաղթող ճանաչվեց Մարիա Ջաֆիրչենկոն: Հարկ է նշել, որ Միխայելը երեւանյան դպրոցի սան է եւ ընդամենը 7 ամիս առաջ է բնակություն հաստատել Թբիլիսիում:

Այս մրցաշարը հայ սուսերամարտիկների համար ուժերի հիանալի ստուգատես էր պատասխանատու մրցումներից առաջ: Հաջորդ տարվա փետրվարին Հունգարիայում կանցկացվի Եվրոպայի առաջնությունը, իսկ մարտին Խորվաթիայում ուժեղագույն սուսերամարտիկները կվիճարկեն աշխարհի առաջնության պարգեւները:

Մինչեւ խոշորագույն այդ մրցաշարերը, նոյեմբերին Երեւանում կանցկացվի սուսերամարտի Հայաստանի առաջնությունը, որի արդյունքներով կկազմավորվեն կանանց եւ տղամարդկանց հավաքականները: Դեկտեմբերին Թեհրանում մեր սուսերամարտիկները կմասնակցեն աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլի մրցումներին:

## Կլիչկոն չի կարող մասնակցել 2016-ի օլիմպիադային

**Գերծանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն, որ երազում էր 2016-ի ամառային օլիմպիադայի ոսկե մեդալի մասին, հնարավորություն չի ունենա մասնակցելու համաշխարհային սպորտի այդ ստուգատեսին: Հիշեցնենք, որ Կլիչկոն դեռեւս 1996-ին որպես սիրողական բռնցքամարտիկ դարձել էր Ատլանտայի ամառային օլիմպիադայի չեմպիոն:**

**Ինչպես հայտնի է, 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիադային մասնակցելու իրավունք է տրվելու նաեւ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկներին: Սակայն նրանց համար որոշակի սահմանափակումներ են մտցվել: Բռնցքամարտիկը չպետք է գերազանցի 40 տարեկանը, իսկ պրոֆեսիոնալ ռինգում առավելագույնը պետք է 15-ից ավելի մենամարտեր անցկացրած չլինի: Իսկ Կլիչկոն արդեն այժմ 61 մենամարտ է անցկացրել:**

## ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը շարունակեց ոչ-ոքիների շարքը

**Շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի 7-րդ տուրում Լեւոն Արոնյանը կրկին հաշտություն կնքեց մրցակցի՝ աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդի հետ: Հիշեցնենք, որ մրցակիցների առաջին շրջանի մրցախաղում էլ ոչ-ոքի էր գրանցվել: Արոնյանն արդեն 6-րդ անընդմեջ պարտիան է ոչ-ոքի ավարտում, միակ հաղթանակը նա տոնել էր Սան Պաուլուում, մրցաշարի մեկնարկային տուրում պարտության մատնելով Սերգեյ Կարյակինին: 7 տուրից հետո Արոնյանը 9 միավորով 3-րդ տեղում է:**

**Մրցաշարի 2-րդ շրջանը շատ հաջող է սկսել Մագնուս Կառլսենը, որը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով Ֆրանսիսկո Վալյեխոյի նկատմամբ, վաստակեց 12 միավոր ու Ֆաբիանո Կարուանայի հետ գլխավորեց աղյուսակը: Վերջինս հաշտություն կնքեց Կարյակինի հետ:**



**8-րդ տուրում Արոնյանը սեւերով կխաղա Վալյեխոյի հետ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Անանդ-Կարուանա պարտիան: Կառլսենի մրցակիցը կլինի Կարյակինը:**

## Պատանիներն անհաջող մեկնարկեցին

**Մինչեւ 19 տարեկանների ֆուտբոլի Հայաստանի պատանեկան հավաքականն էլ շատ անհաջող մեկնարկեց Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարում: Հայ ֆուտբոլիստները Շոտլանդիայում անցկացվող ընտրական 9-րդ խմբի մրցաշարի մեկնարկում 0-4 հաշվով զիջեցին տանտերերին: Խմբի մյուս խաղում մրցեցին Շվեյցարիայի եւ Ռումինիայի հավաքականները: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:**

**Այսօր ՀՀ պատանեկան հավաքականը կխաղա շվեյցարացիների հետ, իսկ հոկտեմբերի 14-ին ավարտական խաղում կմրցի ռումինացիների հետ:**

## «Միկան» սկսում է մրցավեճը

**Այսօր Իսրայելի Էյլաթ քաղաքում կմեկնարկի շախմատի Եվրոպայի ակումբային առաջնությունը: Այս տարի Հայաստանը կմասնակցի միայն կանանց մրցաշարին, որտեղ մեր երկիրը կներկայացնի «Միկան»: Մեր թիմի կազմում հանդես կգան Էլինա Դանիելյանը, հնդիկ շախմատիստուհի Հարիկա Դրոնավալին, Լիլիթ Մկրտչյանը, վրացի Լելա Ջավախիշվիլին ու Աննա Հայրապետյանը: Մրցաշարին կմասնակցեն կանանց 8 թիմեր, որոնք շրջանաձեւ մրցակարգով կվիճարկեն Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:**

**Հաջորդ տարի Թուրքիայի Կեմեր քաղաքում անցկացված մրցաշարում «Միկան» դարձավ բրոնզե մրցանակակիր: 7 հանդիպումներում «Միկայի» շախմատիստուհիները տոնեցին 5 հաղթանակ, 2-ում պարտվեցին ու 10 միավորով գրավեցին 3-րդ տեղը: Բրոնզե մեդալների արժանացան Էլինա Դանիելյանը, Մայա Չիբուրդանիձեն, Նինո Խուրցիձեն, Լիլիթ Մկրտչյանն ու Լիանա Աղաբեկյանը:**


*2006թ. «Միկայի» չեմպիոնական կազմը*

**Կանանց «Միկա» թիմը բավականին հաջող է հանդես եկել Եվրոպայի ակումբային առաջնություններում: 2005-ից այդ մրցումներին մասնակցած «Միկան» մեկ անգամ նվաճել է չեմպիոնի տիտղոսը, 3 անգամ հայրենիք է վերադարձել բրոնզե մեդալներով:**

**«Միկայի» ամենամեծ հաջողությունը գրանցվել է 2006-ին Ավստրիայի Ֆուգեն քաղաքում անցկացված մրցաշարում, որտեղ մեր շախմատիստուհիները նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Շվեյցարական մրցակարգով, 11 թիմերի մրցավեճում «Միկան» 7 մրցախաղերում վաստակեց 12 միավոր ու գրավեց 1-ին տեղը: Մեր թիմը տոնեց 5 հաղթանակ, 2 հանդիպում ավարտեց ոչ-ոքի: «Միկայում» հանդես էին գալիս Էլինա Դանիելյանը, Նելլի Աղինյանը, Մայա Չիբուրդանիձեն եւ Նինո Խուրցիձեն:**

**Հաջորդ 2 մրցաշրջաններում «Միկային» չհաջողվեց մրցանակային տեղեր զբաղեցնել: 2008-ին Հունաստանի Կալիթեա քաղաքում անցկացված մրցաշարում «Միկան» գրավեց 5-րդ տեղը, իսկ հաջորդ տարի Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում մեր շախմատիստուհիները զբաղեցրին 9-րդ տեղը: Ի դեպ, նույնպիսի արդյունք նրանք ցույց էին տվել 2005-ին, երբ նորամուտն էին նշել Եվրոպայի ակումբային առաջնությունում:**

**Վերջին 2 տարիներին «Միկան» կրկին հաջող հանդես եկավ՝ դառնալով բրոնզե մրցանակակիր: 2010-ին բուլղարական Պլովդիվում «Միկան» 14 հնարավորից վաստակեց 9 միավոր: Բրոնզե մեդալների արժանացան Էլինա Դանիելյանը, Հարիկա Դրոնավալին, Լիլիթ Մկրտչյանն ու Լիլիթ Գալոյանը:**

**Անցյալ տարի «Միկան» կրկնեց իր բրոնզե հաջողությունը: Թիմի կազմում էին Էլինա Դանիելյանը, Հարիկա Դրոնավալին, չինացի Ժու Չենը եւ Լիլիթ Մկրտչյանը: «Միկան» տոնեց 5 հաղթանակ, 2-ում պարտվեց:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լվացքատան համար անհրաժեշտ լվացքի մեքենա եւ արդուկ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքները ապահովվելու նպատակով անհրաժեշտ լվացքի մեքենա եւ արդուկ ձեռք բերելու նպատակով մասնակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձևով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2012թ. նոյեմբերի 20-ի ժամը 16:00-ն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. նոյեմբերի 20-ին ժամը 16:00-ին:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. նոյեմբերի 27-ին ժամը 16-00-ին:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու կամ հարցեր պարզաբանելու համար, ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013թթ կարիքները ապահովվելու համար ավտոմեքենաներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքները ապահովվելու նպատակով թվով 3 հատ միկրոավտոբուս (Լոտ 1) եւ թվով 6 հատ մարդատար (Լոտ 2 եւ 3) ավտոմեքենաներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

6) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

7) մասնագիտական փորձառություն.

8) տեխնիկական միջոցներ.

9) ֆինանսական միջոցներ.

10) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձևով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2012թ. նոյեմբերի 20-ի ժամը 16:00-ն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. նոյեմբերի 20-ին ժամը 16:00-ին:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. նոյեմբերի 27-ին ժամը 16-00-ին:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

2) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (**www.cba.am**): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու կամ հարցեր պարզաբանելու համար, ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շենք շինությունների մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Անդրանիկի փողոց 10/1շ 57 տարածք | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 12,700,000 |
| 2 | Նորքի 11 փողոց թիվ 95/1 | կաթսայատուն | 397.92 | 303.56 | 9,943,000 |
| 3 | Րաֆֆու փողոց 29/4 | կաթսայատուն | 232.32 | 217.13 | 7,000,000 |
| 4 | Տ.Մեծի 51/2 | Կաթսայատուն | 226.80 | 203.33 | 25,700,000 |
| 5 | Բագրատունյաց 49 | Կաթսայատուն | 237.46 | 237.46 | 24,400,000 |
| 6 | Դավթաշեն 2-րդ թաղ. ԿՋՀ 2 | կաթսայատուն | 371.25 | 333.20 | 11,200,000 |
| 7 | Մ.Խորենացի 30 | կաթսայատուն | 156.89 | 128.30 | 20,770,000 |
| 8 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.70 | 122.70 | 13,400,000 |
| 9 | Այասի փողոց թիվ 1/3 | կաթսայատուն | 414.50 | 305.70 | 25,000,000 |
| 10 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | կաթսայատուն | 249.30 | 129.70 | 14,650,000 |
| 11 | Տիգրան Մեծի 26 | կաթսայատուն | 305.00 | 261.20 | 37,740,000 |
| 12 | Չարենցի փողոց 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.00 | 10,300,000 |
| 13 | Հ Հակոբյան 1/7 | կաթսայատուն | 108.80 | 108.80 | 30,870,000 |
| 14 | Մամիկոնյանց փող. 56/9 | կաթսայատուն | 218.24 | 260.50 | 45,770,000 |
| 15 | Բաղրամյան պող. 25 | կաթսայատուն | 216.10 | 188.10 | 38,910,000 |
| 16 | Աբովյան 62շ. 31 տարածք | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 12,850,000 |
| 17 | Արշակունյաց 6 | ոչ բնակելի տարածք | | 62.70 | 5,100,000 |
| 18 | Ռայնիսի փողոց 26/3 | կաթսայատուն | 240.75 | 240.75 | 7,100,000 |
| 19 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 12,230,000 |
| 20 | Նորաշխարհյան 17/9 | կաթսայատուն | 238.12 | 238.12 | 11,950,000 |
| 21 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 29,270,000 |
| 22 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 11,090,000 |
| 23 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 11,320,000 |
| 24 | Օհանովի 58/1 | կաթսայատուն | 307.50 | 283.85 | 17,200,000 |
| 25 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 15,260,000 |
| 26 | Բաշինջաղյան փող.հ.185/1 | կաթսայատուն | 321.07 | 270.40 | 10,500,000 |
| 27 | Գալշոյան 19/1 | կաթսայատուն | 159.96 | 137.40 | 9,525,000 |
| 28 | Աթոյան անց., հ11/2 | կաթսայատուն | 436.00 | 436.00 | 19,350,000 |
| 29 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 163.80 | 163.80 | 8,250,000 |
| 30 | Ճառագայթային փող., 136/1 | կաթսայատուն | 316.25 | 282.90 | 17,025,000 |
| 31 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,600,000 |
| 32 | Շահվերդյան 18, ԿՋՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 19,950,000 |
| 33 | Շիրակի 56 | կաթսայատուն | 255.38 | 228.80 | 6,075,000 |
| 34 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,300,000 |
| 35 | Գաջեգործների 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,798,000 |
| 36 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,588,750 |
| 37 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.30 | 13,365,000 |
| 38 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 12,600,000 |
| 39 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 13,707,000 |
| 40 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 8,880,300 |
| 41 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 29,605,500 |
| 42 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,083,700 |
| 43 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 20,295,000 |
| 44 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 12,892,500 |
| 45 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 8,060,400 |
| 46 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 10,319,400 |
| 47 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.80 | 11,401,200 |
| 48 | Բաշինջաղյան փողոց հ.187/6, հ.1 ԿՋՀ | կաթսայատուն | 297.49 | 297.40 | 15,390,000 |
| 49 | ԿՋՀ հ.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.10 | 7,677,000 |
| 50 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.30 | 24,075,000 |
| 51 | Ադոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.80 | 218.60 | 17,667,000 |
| 52 | Ադոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.80 | 211.00 | 16,884,000 |
| 53 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 22,855,500 |
| 54 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 22,732,200 |
| 55 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 3,780,000 |
| 56 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 10,863,000 |
| 57 | Քաջազնունու փողոց 11 շենք 111 շին. | ոչ բնակելի տարածք | | 350.80 | 15,750,000 |
| 58 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 230.50 | 34,380,000 |
| 59 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 199.30 | 28,800,000 |
| 60 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 60.30 | 9,000,000 |
| 61 | Կողբացի 2ա 93 ոչ բն. Տարածք | ոչ բնակելի տարածք | | 24.00 | 1,593,000 |
| 62 | Ագաթանգեղոսի 29 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 15.70 | 10,530,000 |
| 63 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 4,122,000 |
| 64 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 8,770,500 |
| 65 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24.00 | 4,500,000 |
| 66 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.90 | 4,815,000 |
| 67 | Թումանյան 11 շ 72 տարածք | ոչ բնակելի տարածք | | 10.30 | 1,030,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ հոկտեմբերի 25-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ հոկտեմբերի 25-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# Հայտարարություն

Հայաստանի Հանրապետությունը փոխառություն է ստացել Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ 1-ի ֆինանսավորման համար, որի հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է վերգետնյա հանրային տրանսպորտային ցանցի վերակազմավորումը հիերարխիկ ցանցի: Կարճաժամկետ ձեւաչափում հիմնական նշանակետն է հանդիսանում ավարտին հասցնել արեւմտյան քաղաքային օղակաձեւ ճանապարհի պակասող հատվածները: Երկու ճանապարհային ծրագրերը կօգնեն փոխել քաղաքի միջով անցնող երթեւեկության ուղղությունը քաղաքի կենտրոնից:

Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ–ը հայտարարում է մրցույթ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբում հետեւյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար՝

1. Ֆինանսական մասնագետ
2. Գնումների մասնագետ
3. Տեխնիկական մասնագետ
4. Ինստիտուցիոնալ մասնագետ
5. Իրավաբան /պայմանագրերի կառավարման մասնագետ
6. Մոնիթորինգի եւ գնահատման մասնագետ
7. Հողի օտարման եւ տարաբնակեցման մասնագետ
8. Հաղորդակցության եւ հանրության հետ կապերի մասնագետ
9. Բնապահպանության մասնագետ
10. Օգնական/թարգմանիչ

Մրցույթին մասնակցել ցանկացողները աշխատանքային նկարագրերին եւ ներկայացվող մասնագիտական պահանջներին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանի՝ **www.yerevan.am** պաշտոնական կայքում:

Հայտերը պետք է ուղարկվեն vacancy@yerevan.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (subject line) նշելով պաշտոնի անվանումը:

Բոլոր հայտերը պետք է ներկայացվեն հայերեն եւ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF ֆորմատով մինչեւ 2012թ. հոկտեմբերի 25-ը:

Սահմանված ժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

1. Հայտերը պետք է պարունակեն հետեւյալ փաստաթղթերը՝
2. Ուղեկցող նամակ (առավելագույնը 1 էջ)
3. Ինքնակենսագրություն (Resume կամ CV)

Երկու երաշխավորողների անունները եւ կոնտակտային տվյալները:

***«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 9.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: